

Եսգելսը և բիոլոգիան

Գաբրիելյան Ռուբեն Բալասի

$A_{\lambda \rho}^{\bar{\mu}}$

ԷՆԳԵԼՍԸ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱՆ

Սովետական Միության սոցիալիստական շինարարությունը և մեծ պահանջներ է գրել բիոլոգիայի առաջ թե՛ զյուզաւանտեսության և թե արդյունաբերության նկատմամբ՝ բույսեացի և կենդանիների ավելի ռացիոնալ ու ավելի մեծ չափով օգտագործման հարցերում։ Բազմաթիվ հարցեր, ինչպես՝ բույսերի քերքավության բարձրացումը, նոր բուսական ձևերի ակլիմատիզացիա, աճման պրոցեսի արագացում, իսկ կենդանաբուժության ուղղությամբ—մսի, մորթու, կաշվի, կաթնատվության հարցեր, ևոր ձևերի առաջացում—խաչաձևմամբ, սելեկցիայով, նոր վայրի ձևերի ընտելացում և կիրառումը մեր տնտեսության մեջ և այլն և այլն,—ահա այս բոլոր պրոբլեմների լուծման գործում անշրջառ կարևոր գեր ունեն կատարելու բիոլոգները։ Ծնորհիվ մեր տնտեսության նոր ձևերի—կոլտանտեսությունների և սովետական տնտեսությունների, մեր արդյունաբերական ճյուղերի, շնորհիվ մեր տնտեսության սոցիալիստական ձևերի՝ գիտնականների համար լայն հնարավորություններ են ստեղծվում զիտահետազոտական աշխատանքներին մասսայական ընույթ տալու, լաբորատորիաներում մշակվածն անմիջապես պրակարիկ ձեռնաբարություններում ստուգելու և ապա կիրառելու։

Այդ բոլոր հարցերի ճիշտ լուծման համար բնականաբար պահանջվում է բիոլոգիական երևույթների ճիշտ լուսաբանություն, նրանց օրինաչափությունների ճիշտ պարզաբանում, որովհետեմեր երկրում զիտության առաջ հարց է գրված՝ ոչ միայն լայն չափերով օգտագործել այն բոլորը, ինչ որ տալիս է բնությունը, այլ և փոփոխել բնության օրեկտներն այնպես, ինչպես որ պահանջում է մեր տնտեսությունը։ Եվ այդ արվում է զիտության պլանավորման կարգով։ Բավական չէ իմանալ, թե ի՞նչպես են օրգանիզմները փոփոխվում բնության մեջ, այլև անհրաժեշտ է գտնել այն միջոցները, որոնք հնարավորություն կտան մեզ

գնալ ընության դեմ, ենթարկել այն մեզ և արհեստական միջոցներով զեկավարել օրգանիզմի փոփոխություններն այս կամ այն ուղղությամբ: Բավական է հիշել այս ուղղությամբ կատարած խոշոր աշխատանքները մի շարք պրակտիկ բիոլոգ-դարվինիստների, ինչպես Լըսենկո, Միջուրին, Ծիցին, Իվանով և շատ ուրիշներ:

Վերոհիշյալ ինդիրների արագ լուծման համար բիոլոգից պահանջվում է տիրապետել հարցերը լուսաբանելու այն մեթոդին, որ կրերի նրան ճիշտ եղանակացությունների, կտա նրա ձեռքն ուժեղ դենք՝ իրագործելու մեր երկը սոցիալիստական շինարարության պահանջները:

Կան մի շարք տեսական բիոլոգիական պրոբլեմներ, որոնց լուսաբանությունը կապ ունի մեր պրակտիկ կյանքի հետ, հարցեր, որոնք մեծ նշանակություն ունեն աշխարհայցքային տեսակետից: Այդ հարցերն են, օրինակ՝ մարդու ծագումը, կյանքի էությունը, կյանքի ծագումը, ժառանգականություն, էվոլուցիոն ուսմունք—դարվինիզմ և ուրիշները: Սակայն այդ հարցերը տեսական լինելով՝ միաժամանակ կապված են մի շարք պրակտիկ ինդիրների հետ. նրանց սխալ մեկնաբանությունից՝ պրակտիկ կյանքի հարցերում ևս առաջ են բերվում սխալ եղանակացություններ: Զի կարելի իրարից կտրել տեսությունը և պրակտիկան. երկուսն էլ մի միասնություն են կազմում: Բիոլոգիական բոլոր գործնական հարցերն այս կամ այն չափով կապված են տեսական հարցերի հետ: Տեսական հարցերի լուսաբանումը հին մեթոդով, հին գիրքերից ելնելով՝ բերում է մեր բազմաթիվ հակասությունների:

Միայն մարքս-լինինյան մեթոդուգիան է, որը դուքս է բերում բիոլոգիայի պրոբլեմները ճիշտ ճանապարհի վրա, վերացնում հակասությունները, շարժում մեռյալ կետից այս կամ այն ինդիրը և նոր թափ տալով՝ առաջ զարգացնում:

Թե որքան հիմնավոր, կենսունակ և գիտական է մարքս-լինինյան մեթոդուգիան—գրան ապացույց մեր Սովետական Միության (որի բիգեոլոգիան է մարքսիզմ-լենինիզմը) ամբողջումը, հաղթական ընթացքը, հաղթանակը Հայրենական պատերազմում: Ընկեր Ստալինը վետրվարի Զին Մոսկվայի ստալինյան ռայոնի նախընտրական ժողովում իր արտասահմած ճառում սովետական գիտնականների առաջ էլ գրեց պատվավոր, միծ և լուրջ ինդիր—ուշ միայն հասնել, այլև մոտ ժամանակում գեղա

բազմանցել մեր երկրի սահմաններից գուրս զիտության նվաճում - ները:

Ապա, ուրեմն, ամեն մի ըլուղի առաջ էլ լուրջ հարց է գրված՝ տիրապետել մարքս-լենինյան մեթոդոգիային, տիրապետել գիտական-մատերիալիստական մեթոդին. այս ճանապարհով համարձակ և լուրջ կդրվեն ու կլուծվեն բիոլոգիական պրոբլեմները, ավելի խոր և ճիշտ կլուսաբանվեն, հետևաբար և մեծ արդյունքով կիրառվեն գործնական հարցերում:

Միայն Մարքս-լենինյան մեթոդոլոգիան գուրս կրերի բիունգիան հակասություններից, ուժեղ թափ կտա, կթարմացնի, կկենդանացնի բիոլոգիական տեսական մի շարք պրոբլեմները և չի թողնի, որ վերջիններին տրվեն միտիկական, ուեսկցիոն մեկնաբանություններ:

Շատ բնական է, որ մեր կյանքը լուրջ պահանջ է գրել ամեն մի բնագետի, բնագետ-բիոլոգի առաջ՝ վերանայել իր տեսական պաշարը, իր աշխարհայացքը, հին մեթոդները: Եվ դրա համար անպայման պիտի ուսումնասիրել մարքսիզմի կլասիկներին, յուրացնել մարքսիստական աշխարհայացքը:

Բնագիտությունը, որպես գիտություն, միշտ էլ սերտ կապված է եղել մատերիալիստական փիլիսոփայության հետ:

Գիտությունը երբեք կտրված չի եղել կոնկրետ իրականությունից: Գիտությունը, որպես իդեոլոգիա, գասակարգային պայքարի ղենքերից մեկն է հանդիսանում և միշտ էլ պարտիական է եղել: Կան բնագետներ, որոնք սահմանափակվելով իրենց նեղ մասնագիտությամբ, հեռու մնալով սկզբունքային հարցերից, փաստորեն շարունակում են մնալ հին ժառանգության տակ:

Կան և բնագետներ, որոնք ջերմ լծվելով նոր կյանքի շինարարության աշխատանքներին, սակայն իրենց մասնագիտության բնագավառում դեռ չեն տիրապետել նոր մեթոդոգիան:

Մարքսիզմին, գիտելելու մատերիալիզմին տիրապետելու արդեն վաղուց օրվա լողունք է գարձել, անհրաժեշտություն է նաև ամեն մի բիոլոգ բնագետի համար:

Նոր մեթոդոլոգիային տիրապետելու համար անպայման ամեն մի բնագետի հրատապ պահանջը պիտի լինի ծանոթանալ, լուրջ ուսումնասիրել մարքսիզմի կլասիկներին, որոնք մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրել են բնագիտությունը և

մարքսիստական վերլուծման ենթարկել մի շարք հանգուցային պրոբլեմները:

Բնագիտության և հատկապես բիոլոգիայի նշանակությունը շեշտել են բոլոր մարքսիստները, բայց ամենից շատ բնագիտության հարցերով զբաղվել են Մարքսը, Լենինը և մանավանդ Էնդելսը: Նրանց աշխատություններում քիչ չեն ցըված մտքեր քնազիտության ակտուալ սկզբունքային հարցերի վերաբերյալ և նրանք ամենևելին դիլետանտի ակնոցներով չեն մոտեցել բնագիտությանը, բիոլոգիային, այլ լուրջ ուսումնասիրել են որոշ գեղքերում ոչ միայն փիլիսոփայական ամփոփումները (ինչպես, գարվիճնիզմը), այլ և կոնկրետ հարցեր, կրնկրետ գիտություններ, ինչպես ֆիզիկա, քիմիա, գեոլոգիա, բիոլոգիական գիտություններ, նույնիսկ մաթեմատիկա (օրինակ՝ Մարքսը): Նրանք եղել են ոչ թե պասսիվ ուսումնասիրողի գերում, այլ մարքսիստական վերլուծման բովով են անցկացրել մի շարք այնպիսի պլոբեմներ, որոնց լուսաբանությունը չեն հասցվել մինչև վերջ, կամ թե սխալ են վերլուծել մասնագետ բնագետները:

Առանձնապես պետք է շեշտել էնդելսի խոշոր նշանակությունն այդ գործում:

Էնդելսը մատերիալիզմի զարգացումը սերտորեն կապում էր բնագիտության հետ, ապա և բիոլոգիայի ուսումնասիրությունը նա խիստ կարենու էր համարում: Էնդելսն ասում է, որ բնագիտության զարգացման յուրաքանչյուր հայտնագործությունը մատերիալիզմը բարձրացնում է մի նոր աստիճանի վրա: Լուրջ բիոլոգի նման էնդելսը բավական մանրամասն ուսումնասիրել է մի շարք բիոլոգիական գիտություններ, բիոլոգիական տեսություններ, ապա արաահայտվել բիոլոգիական մի շարք կարենու, սկզբունքային նշանակություն ունեցող կոնկրետ հարցերի մասին: Եվ էնդելսի մտքերը զեկավար գեր պիտի կատարեն բնագիտության, բիոլոգիայի պլոբեմների մարքսիստական վերլուծման հարցում, նրանց մարքսիստական պատմության հիմնագրման համար: Էնդելսը տալիս է մեզ բնագիտությունը:

Բիոլոգիայի բնագավառում կան բազմաթիվ հարցեր, որոնք ունեն սկզբունքային, աշխարհայացքային նշանակություն, պրոբլեմներ, որոնց շուրջն ուժեղ թափով ընդհարվում են ոչ

միայն մատերիալիստներն ու վիտալիստները, այլև մեխանիստական ու դիալեկտիկական մատերիալիստները:

Էնգելսը իր մի շարք հիմնական աշխատություններում, ինչպես՝ «Անտի-Դյուրինգ», «Լյուդվիգ Ֆեյերբախ», մանալանդ «Բնության դիալեկտիկա» և Մարքսին ու ուրիշներին գրած իր մի շարք նամակներում արտահայտվել է բիոլոգիայի զլիավոր, հանգուցային, սկզբունքային հարցերի մասին: Հիշյալ աղբյուրները կարեռը նշանակություն ունեն ոչ միայն ամեն մի մարքսիստի համար, այլ առավել ևս բնագետ մարքսիստի և մանավանդ այն բնագետի համար, որը ցանկանում է տիրապետել բիոլոգիական պրոբլեմների մարքսիստական լուսաբանությանը:

Ամեն մի բնագետ հնարավորություն է ստանում թոթափել իր վրայից (եթե ունի) մեխանիստական մատերիալիզմից ստացված ժառանգությունը և ապա նոր լուսաբանությամբ ուսումնասիրելով բիոլոգիայի պլորեմները՝ գուրս գալ այն հակասություններից, որոնց մեջ ընկել է բուրժուական բիոլոգիան:

Բիոլոգիան պատասխանատու և լուրջ բնագավառ է:

Էնգելսի անալիտիկ մաքին հնթարկվել են այնպիսի հարցեր, ինչպես՝ կյանքի էությունը, կյանքի ծագումը, զարգացումը (գարվինիզմ), մանավանդ հետաքրքրական են նրա ընդարձակ մեկնաբանությունները մարդու ծագման վերաբերյալ: Նա ծանրացել է այդ հարցի այն կետի վրա, որ չեն ուսումնասիրել բնագետները: Դարվինը հասնելով այդ կետին, կանգ էր առել մասամբ սխալ մեկնաբանության փորձեր տրել: այդ հարցն է—նախնական մարդանման կազմի մարդացման պրացենը:

Էնգելսը կտրուկ կերպով է դնում գործնականի և տեսության սերտ շաղկապման հարցը և շեշտում է փիլիսոփայական ընդհանրացումների անհրաժեշտությունն ու կարելությունը բնագետի համար:

Էնգելսի աշխատություններից շատ պարզ է, թե որչափ անհրաժեշտ է մարքսիստին բնագիտությունը, բնագետին՝ մարքսիստական մեթոդոլոգիան, փիլիսոփային՝ բնագիտությունը և բնագետին՝ փիլիսոփայությունը:

«Բնագետները հավատացած են, թե իրենց ազատազրում են փիլիսոփայությունից, եթե անտեսում կամ հայնոյում են այն: Բայց որովհետեւ նրանք առանց մտածության մի քայլ առաջ դնալ չեն կարող և մտածելու համար կարիք ունեն մտա-

որոշումների, ուստի այդ կատեղորիաները նրանք անկշռագաւառորեն փոխ են առնում հին փիլիսոփայությունների մնացորդների ազգեցության տակ գտնվող այսպես կոչված ուսայալ մարդկանց սովորական գիտակցությունից, կամ փիլիսոփայական համալսարանական պարագիր գասընթացի փշրանքից (որ ոչ միայն հատուկություն է, այլ ներկայացնում է ամենատարբեր ու ամենավատթար դպրոցներին պատկանող մարդկանց հայացքների մի խառնաշգինություն), կամ ամեն տեսակ փիլիսոփայական գրվածքների անքննադատ ու անսիստեմ ընթերցումից գրանով, սակայն, նրանք ավելի պակաս չափով չեն մնում փիլիսոփայության, այն էլ դժբախտաբար մեծ մասամբ վատթարագույն տիպի փիլիսոփայության, ստրկության միջ. և հենց նրանք, որոնք ամենից շատ են հայեցաւմ փիլիսոփայությունը, հանդիսանում են վատթարագույն փիլիսոփայությունների վատթարագույն կերպով գոեհկացրած մնացորդների ստրուկները (ընդգծումը մերն է—Ռ. Գ.)*:

Ինչքան էլ բնագետները խռուսափեն, բայց և այնպես «նըրանց իշխում» են փիլիսոփաները. հարցը միայն այն է՝ նրանք ուղղում են ինչ որ վատ, մոդա դարձած փիլիսոփայի տիրապետության տակ ընկնել, թէ տեսական մտածության մի ձեի, որը հենվում է մտածության պատմության և նրա նվաճումների ծանոթության վրան*: Բնագիտությունը գեռշարունակում է սնվել հին մետաֆիլիկական գաղափարներով և միայն դիալեկտիկական մատերիալիզմի ազգեցությամբ այն կիրամանաւ, կը զարգանաւ, կազմավի անցյալի բացասական մնացորդներից:

Էնգելմը նկատում է, որ մի ժամանակ բնագիտությունը (մինչև XVIII դարի վերջը) զբաղված էր փաստեր հավաքելով, ուներ նկարագրական բնույթ և միայն XIX դարում բնագետները սկսեցին կուտակված բարգմաթիվ փաստերը կարգավորել սիստեմատիկացիայի ենթարկել և աշա դրա հիման վրա ընդհանրացումներ անել: Բնագիտությունը դարձավ բնական, երեվութներն ուսումնասիրով և ընդհանրացնող գիտություն, դարձավ բնության օբյեկտների «ծագման», զարգացման նրանց կապակցությունն ուսումնասիրող» (էնգելմ) գիտություն (ընդգծումը մերն է—Ռ. Գ.):

XVIII դարում տիրապետող այն տեսակետին, թէ բնությունն անփոփոխ շարժվում է միենույն սահմանափակ սփե-

* Энгельс, Диалектика природы, 1929 г., стр. 25.

** Նույն տեղ, հայերեն հրատարակութ. էջ 167:

բայում՝ ունենալով հավիտենական երկնային մարմիններ, ինչպես ուսուցանում էր Նյուտոնը», ունենալով «անվտվոխ օրդանական ձեր, ինչպես ուսուցանում է Լինննն», ինգելոք հակագրում է «ժամանակակից մատերիալիզմը, որը մեկ սիստեմի մեջ է ամփոփում ընագիտութան այն նվաճումները, որոնց շնորհիվ պարզ եղավ, թե ընությունն էլ ունի իր պատմությունը ժամանակի մեջ, թե երկնային մարմինները, ինչպես այնտեղ ընակվող օրգանիզմների բոլոր աեսակները նպաստավոր պայմանների գեպքում ծագում են, անհետանում են... երկու գեպքումն էլ մատերիալիզմն էապես զիալեկտիկական է...»* ընության երկույթներն արգեն ունեն զիալեկտիկական բնույթ: «Բնությունը, — ասում է ինգելոք, — զիալեկտիկայի փորձնական քարեն է: Եվ ժամանակակից ընագիտությունը, որ այդ փորձի համար տրամադրում է չափազանց հարուստ և օրբստօրե աճող նյութ, հենց զրանով ապացուցեց, որ բնության մեջ վերջի վերջո ամեն ինչ կատարվում է զիալեկտիկորեն և ոչ մետաֆիզիկորեն, թե այն շարժվում է, շարժվում է ոչ թե հավիտենապես միասարը, մշտապես, նորից կրկնվող շրջանում, այլ նա ապշում է իսկական պատմություն»**:

Բնագիտության պատմության, զիտության նվաճումների ուսումնասիրությունը բաց արեց ինգելուք առաջ աեսական ընազիտության մեջ տիրող «անսահման խառնաշփոթությունը», որն առաջ էր եկել զիտական տվյալների մետաֆիզիկական սընալ լուսաբանության հետեւանքով:

Բնագետները չկարողացան գուրս գտն հակասություններից: «Որովհետեւ մինչև այժմ, — ասում է ինգելուք, — մատների վրա կարելի է հաշվել զիտակտիկական մտածողության սովորած բընագետներին, ապա նվաճած զիտական արդյունքների այդ հակասությունը վերոհիշյալ մետաֆիզիկական մտածողության հետ փուլին բացատրում է այն անսահման խառնաշփոթությունը, որ տիրում է այժմ զիտական բնագիտության մեջ և հավասարապես հուսահատեցնում է ինչպես ուսուցիչնարին, նույնպես և աշկերտներին, ինչպես գրողներին, նույնպես և ընթերցողներին»***:

Խոշոր նշանակություն տալով բնական զիտություններին,

* Թիգելս, От утопии к науке, стр. 51.

** նույն տեղ:

Էնգելսը լուրջ ուսումնասիրում է գիղիկա, քիմիա, բիոլոգիական գիտությունները, բայց նրան հետաքրքրել են ոչ թե առանձին կոնկրետ փաստերը, այլ գիտությունների գիլիսոփայական կողմը: Հատկապես ուսումնասիրել էր համեմատական անատոմիան և ֆիզիոլոգիան, որոնք նրա կարծիքով «գիլիսոփայական տեսակետից, պարունակում են չափազանց շատ կարևոր բաներ»*:

Բնական գիտությունների կարիքն էնգելսն զգաց մանավանդ Հեգելի՝ «Բնության գիլիսոփայությունը» ուսումնասիրելու ժամանակ: Հեգելը շոշափում է այնպիսի հարցեր, որոնք կապված էին բնագիտության այս կամ այն պրոբլեմների հետ: Բնական գիտություններն են, որ հիմնովին բացառում են ամեն տեսակի մետաֆիզիկական, իդեալիստական սկզբունքները: «Ուսումնասիրելով համեմատական անատոմիան, — ասում է էնգելսը, — մեծագույն առելություն ես սկսում զգալ գեղի մարդու իդեալիստական մեծարումը բոլոր կենդանիների գիմաց»**:

Մարքսին գրած նամակում (28/V 1876) նա ասում է, որ «Անտի-Դյուրինդ» աշխատությանը մեծ չափով օժանդակեցին իր բնագիտական պարագմունքները, որոնք հեշտացրին նրա գործը: Բնագիտության բնագավառում նա իրեն զգում է այնքան հաստատ, որ ասում է՝ «Կարող եմ շարժվել աղատությամբ և համոզվածությամբ. իմ առաջ սկսում է ուրվագծվել և այս աշխատանքի վերջը»***:

Լուրջ ուսումնասիրությունների արդյունք էր իր մած աշխատությունը՝ «Բնության գիալեկտիկան», որը ավարտված աշխատանք չէ, կոնսպեկտիվ մի աշխատություն է, որ շատ հարցեր ուրվագծվում են միայն, ընդհանուր գծերով գրված և, ըստ երկույթին, գտնվում էին ուսումնասիրության պրոցեսում:

Էնգելսի բնագիտական մաքերը մեծ չափով արտահայտված են ոչ միայն «Բնության գիալեկտիկայում», այլ և մի շարք տւրիչ աշխատություններում, ինչպես «Անտի-Դյուրինդ», «Լյուդլիդ Ֆեյերբախ», «Ուտոպիայից գեղի գիտություն» և ապա նամակներում:

Մենք կանգ կառնենք բիոլոգիական սկզբունքային հարցերի վրա: Այդ հարցերն են՝ ի՞նչ է կյանքը, կենդանի նյութը:

* Маркс и Энгельс, „Сочинения“ т. 22, стр. 346.

** Նույն տեղ:

*** Նույն տեղ:

նրա էությունը, ինչ է օրգանիզմը, կյանք և մահ, բույս և կենացանի, կյանքի ծագումը, զարգացումը, մարդու տուաջացումը:

Բիոլոգիայի համարյա բոլոր հանգուցային հարցերը չեն վրիպել էնդեմի աշքից:

Մենք, իհարկե, այստեղ չենք տալու բիոլոգիական այս կամայն պրոբլեմի մանրամասն նկարագիրը, որպիսին էնդեմը երեսն բնագիտի նման տալիս է որոշ հարցերի նկատմամբ (օրինակ՝ «Անտի-Դյուրինգ»-ում՝ զարվինիզմի մասին):

Զափազանց հետաքրքրական է այն, թե ինչպիսի լուսաբանությամբ է մոտեցել հարցին ոչ բնագետ էնդեմը:

Բիոլոգիայի պրոբլեմների շարքում ամենահիմնականը բջջի հայտնաբերումն է, նրա նշանակությունը բիոլոգիայի զարգացման համար շատ մեծ էր: Բջջի կենդանի նյութը—այն է ձական հանգույցն է, որի շուրջը շփվում են բոլոր բիոլոգիական պրոբլեմները:

Էնդեմն էլ առանձնահատուկ նշանակություն է տալիս այլ նվաճմանը. նա ասում է, «Ամբողջ ֆիզիոլոգիան ունուցիոնացանող և համեմատական ֆիզիոլոգիայի գոյությունը հնարավոր գարձնող գլխավոր փաստը բջջի հայտաբերումն էր: Բույսերի մեջ՝ Շլայդենի, կենդանական աշխարհում՝ Շվանի գյուտը: Ամեն ինչ բջիջն է»*:

Իր մի քանի աշխատություններում նա խոսում է բջջի նշանակության մասին: Էնդեմի ասելով՝ բջջի հայտնաբործումը համոզեց մեզ այն բանում, որ բոլոր օրգանիզմների զարգացումը, աճումը, մի խոսքով կենսական պրոցեսները կատարվում են ընդհանուր օրենքների համաձայն, պարզեց բջջի փոփոխվելու ընդունակությունը և «նշեց նմանապես այն ուղին, որը տանում է գեղի օրգանիզմների տեսակային փոփոխությունները, որոնց հետեւանքով օրգանիզմները զարգանում են ոչ իբրև առանձիւ անհատներ»**:

«Անտի-Դյուրինգ»-ում (էջ 98) բավական մանրամասն նկարագրում է բջջի կառուցվածքը, խոսում միարժիշների և բազմաբջիշների մասին, նշում օրգանիզմների հյուսվածքների բջջային կառուցվածքը (ոսկր, մկան, ներվ, ջեր, կոճիկ և այլն), բջջի բազմացման, բաժանման մասին, մի խոսքով այնպես,

* Маркс и Энгельс, Сочинения, т. 22, стр. 346.

** Էնդեմ, «Լուգվիդ Ֆեյերախ», էջ 101—102:

Հնչպես կաներ բնագետը, տալիս է ընդհանուր գծերով բջջի նկառքագիրը, իհարկե, իր ժամանակի տվյալների համաձայն եվ էնգելսն այնքան էր խորացել բնագիտության ուսումնասիրության մեջ, որ չէր կարող սովորական բջջը համարել կյանքի ամենասկզբնական միավորը: Նա ծանոթ էր և Հեկկելի մոներների տեսության: Հենվելով որոշ տվյալների վրա էնգելսն ասում է՝ «Ամենաստորին աստիճանի վրա գտնվող օրգանիզմների շրջանում մենք գտնում ենք ահազին քանակությամբ օրգանիզմներ, որոնք բջջից էլ ավելի ցածր են կանգնած. պրոստմյորան, որը սպիտակուցային մի ոլոռն է ներկայացնում՝ առանց որևէ դիֆերենցիացիայի, այլ մոներների մի ամբողջ շարքը և բոլոր փողագոր ջրիմուռները (Siphoneae?): Բարձր օրգանիզմների հետ սրանք բոլորը միմիայն նրանով են կապված, որ նրանց էական բաղկացուցիչ մասը սպիտակուցն է կաղմում և սրա հետեւանքով էլ նրանք կատարում են սպիտակուցային հատուկ ֆունկցիաներ, այսինքն՝ ապրում են և մեռնում»*:

Օրգանական աշխարհի զարգացման պրոցեսում առաջին էտապը ձեակերպված բջջը չէ: Եղել են կյանքի ավելի պարզ ձեեր, թերես միայն կենդանի նյութի միապաղաղ մի զանդված (անկորիզ), այդպես էին մտածում ժամանակակից նշանալորմատերիալիստ բնագետները և էնգելսը էնգելսը թեև համաձայն է, որ սկզբնական պարզ ձեերը ձեկկելի մոներներն են՝ կծկվող և ձգվող սպիտակուցային կույտերը, սակայն ոչ այն ձեերը, ուրոնց վրա կոնկրետ նշում էր ձեկկելը, որովհետև նրանք ամեմմասամբ, —ասում է էնգելսը, —մնվում են օրգանական նյութով. կլանում ինֆուզորիաներ և դիասոմեյներ—այսինքն մարմիններ, որոնք ավելի բարձր են, քան նրանք, և ծագել են ավելի ուշ»**:

Այլ կերպ ասած՝ էնգելսը ձեկկելի մոներներն էլ չի համարում ամենասկզբնական օրգանական ձեերը: Ահա թե ինչպես է նա պատկերացնում կենդանի նյութի զարգացման էտապները: Առաջին էտապում անձեւ սպիտակուցային զանդված է. հետագաքարդացման էտապն արտաքին շերտի (էկտոսարկ), ներքին շերտի (էնդոսարկ) ձեակերպումն է, որոշ արմատուտանիների վրա

* Էնգելս, «Անտի-Դյուրինգ», էջ 10։

** Էնգելս, «Բնության դիալեկտիկա», էջ 31։

առաջանում են կրային խեցիներ, Բարդացման էտապներից մեկն էլ բջջակորիղի, բջջաթաղանթի առաջ գալն է: Ի հարկե, էնգելսի նշած մանրամասնությունները նրա օրիգինալ մտքերը չեն, ուշագրավն այստեղ այն է, թե որքան էնգելսը խորացել էր մանրամասնությունների մեջ, մանավանդ այն, որ խոշոր նշանակություն էր տալիս կենդանի նյութի աստիճանական բարդացմանը, զարգացմանը:

Բջջի էվոլուցիայի հարցը փելիսոփայական հարց է: Էնգելսը բնության էվոլուցիան, բնության իրերի, օրեկտների շարժման, փոփոխականության սկզբունքը կտրուկ կերպով հակադրեց մետաֆիզիկական տեսակետին: Ճիշտ է, բնագիտության բնագավառում էվոլուցիոն սկզբունքը տիրապետող դիրք է զրավել, բայց էվոլուցիան ումանք գունավորում էին վիտալիստական, ումանք մեխանիստական մեկնաբանություններով: Վերջին տիրապետող տեսակետը էվոլուցիոն պրոցեսը համարում էր որպես զոկ քանակական փոփոխությունների պրոցես:

Եթե էնգելսը մանրամասն ուսումնասիրել է բջջի վերաբերյալ տվյանները, բջջի էվոլուցիայի էտապները, -սակայն այդ չի եղել կույր հետևողություն մեխանիստ բնագետներին: Ըստ էնգելսի, բջջի զարգացման պրոցեսում, քանակական փոփոխությունների հետ կատարվել են նաև որակային փոփոխություններ:

Էնգելսի ուրույն մոտեցումը պարզվում է, մանավանդ, երբ նա հատկապես խոսում է կենդանի նյութ - պրոտոպլազմայի էության մասին կյանքը բնորոշելու հարցում:

Մարքսին գրած մի նամակից (1873 թ. V-30) երեսում է բնագիտությունն ուսումնասիրելու նրա հիմնական նպատակը:

«Սիրելի Մավր, — գրում է նա, — այսօր առավոտ, անկողնումս իմ մեջ ծագեցին հետեւյալ դիալեկտիկական մտքերը բնական գիտությունների վերաբերյալ: Բնագիտության առարկան մարմինը շարժող նյութն է: Մարմինները չի կարելի անջատել շարժումից, Նրանց ձեւերը և տեսակները կարելի է ճանաչել միայն շարժման մեջ: Շարժումից դուրս մարմինների մասին, առանց իրար հետ ունեցած կապակցության, ոչինչ չի կարելի ասել: Միայն շարժման մեջ մարմինը ցույց է տալիս, թե ինչ է նա: Ապա ուրեմն բնագիտությունը ճանաչում է մարմինները, գիտում նրանց մեկը մյուսի հարաբերությամբ շարժման մեջ: Տարբեր ձեւերի մարմինների ճանաչողությունն է:

Այդ պատճառով այդ տարբեր ձևերի շարժման հետազոտությունը բնագիտության գլխավոր առարկան է»*:

Էնդեւսը հետեւյալ կերպ է ուրվագծում նյութի շարժման ձևերը.

«1. Շարժման, առաջին ամենապարզ ձև՝ մեքենականն է, զուտ տեղափոխությունը:

ա. Գոյություն չունի առանձին մարմնի շարժում, այլ միայն հարաբերական: Անկում:

բ. Անջատ մարմինների շարժում՝ տրանկտորիա, աստղաբաշխություն—երեանքային հավասարակշռություն, վերջապես միշտ կոնտակտ:

ց. Իրար շոշափող մարմինների շարժման փոխադարձ հարաբերությունը—ձնզում...»

«2. Այս տարբեր ուժերը (բացառությամբ ձայնի)՝ երկնային մարմինների ֆիզիկա—

ա) փոխարկվում են մեկը մյուսին և փոխարինում են իրար և

բ) Ուժի քանակական զարգացման որոշ աստիճանի վրա, որ տարբեր է, կիրառված ամեն մի մարմնի համար, լինի գաքիմիապես բարդ, թե պարզ—հանդես են գալիս քիմիական փոփոխությունները. այստեղ մենք քիմիայի բնագավառումն ենք»

3. Ֆիզիկան պետք է, կամ կարող է անուշադիր թողնել կենդանի օրգանական մարմինները. քիմիան օրգանական բազավությունների ուսումնասիրության մեջ գտնում է կարևորագույն մարմինների ճշմարիտ բնույթի իսկական լուսաբանությունը, իսկ մյուս կողմից նա ինքն է բաղադրում մարմիններ, որոնք միայն օրգանական բնության մեջ են հանդես գալիս**:

Այս հատվածից արդեն երևում է, թե ինչպես է պատկերացնում էնդեւսը կենդանի նյութի էությունը: Մի կողմից նա նշում է այն աստիճանական փոխակերպությունները, որ ունենում է մարմինը, նրա շարժման ձևերը (իսկ մարմինը, նյութն ու շարժումն իրար հետ կապակցված են, մեկն առանց մյուսի գոյություն չունի): Սկսելով անօրգան մարմիններից, կապակցելով բոլոր ձևերի շարժումները՝ բերում հասցնում է մեզ

* Маркс и Энгельс, Сочинения, т. 24, стр. 412.

** Էնդեւս, Բնության գիտեկաթիկան, էջ 8.

Նյութի այն ձեր շարժմանը, որն օրդանական որոշ նյութի՝ կենազանի նյութի յուրահասնկությունն է: Կենազանի նյութի շարժման հատկությունը դրսից բերված մի ուժ չէ, ինչպես պատկերացնում են վիտավիստները, այլ հենց իրեն օրդանիզմին, նրա կենազանի նյութին հատուկ է շարժման ընդունակությունը: «Շարժումն իրեն այդպիսին, իրեն նյութի էական գործունեություն, նյութի դոյաձե՝ անչքանալի է, ինչպես և նյութն ինքը»*:

Սակայն նյութի շարժումն էնդելը չի պատկերացնում: որպես հասարակ մեխանիկական շարժում, հասարակ տեղափոխություն: Նյութի շարժման ձևերն են՝ ջերմություն, էլեկտրական լույս և մագնիսական երևույթներ, քիմիական երևույթներ, «կյանքը, վերջապես և դիտակցությունը» (էնդելո): Շարժման այդ բոլոր ձևերի մեջ նա տեսնում է ոչ միայն քանակական, այլև սրակական տարրերությունն: Նյութն իր շարժման ընթացքում կը ունի քանակական և որակական փոփոխություններ:

Լսենք էնդելսին, «Աօել, թե իրը նյութը իթ հավեա անսահման գոյության ամբողջ ընթացքում միայն մի անգամ, այն էլ իր մշտնջնականության համեմատությամբ՝ խիստ կարճատեկ տեսղությամբ տարրերակելու հասրավորություն ունեցել է իր շարժումը, այդպիսով այդ շարժման ամբողջ հարստությունը բացահայտելու և որ դրանից հետո ու դրանից առաջ նա հավեա դատապարտված է սահմանափակվելու լոկ տեղափոխությամբ: այդ նշանակում է պնդել, թե նյութը (ուժը) վերջնական է, իսկ շարժումն անցողիկ: Շարժման անչքանելիությունը չի կարելի ըմբռնել միայն քանակապես, այլ պետք է ըմբռնել նաև որակապես »**:

Էնդելսն օրդանիզմը պատկերացնում է որպես մի ամբողջություն: Օրդանիզմն այնպիսի բարձրագույն միասնություն է, որն իր մեջ ընդգրկում է, որպես մի ամբողջություն՝ մեխանիկան, ֆիզիկան, քիմիան և այդ երրորդությունն այլևս իւրաքից քաժանել չի կարելի: Բնության մարմինների շարժումը չի կարելի անջատել մեկը մյուսից:

* էնդելո, «Բնության դիալեկտիկա», էջ 20:

** Նույն տեղ, էջ 153:

Կյանքի էտկան մտուր—նրա հիմնական քիմիական բարդ օլգանական նյութը—սպիտակուցն է։ Սպիտակուցը յուրահատու նյութ է, թեև նա նման է մի շարք ուրիշ օրգանական նյութերի, ածխածնային միացություն է։ Նրա գործունեության գոյության պայմանները չափազանց բարդ և առանձնահատուեն։

Թեև կենդանի նյութի մեջ կատարվում են ֆիզիկո-քիմիական պրոցեսներ, բայց այս պրոցեսների բազայի վրա միաժամանակ կատարվում են յուրահատուկ երեսություններ, ինչպես նյութերի փոխանակություն, բազմացում, դդացողություն, աճում երեսություններ, որոնց նմանն անօրգանական աշխարհում տեսնելի կարելի։

Սպիտակուցն աչքի է ընկնում իր անկայունությամբ։ աննըսպասա պայմանների ազդեցությամբ շուտ քայլայվում է, տարրալուծվում ավելի պարզ նյութերի նրա գոյության պայման ներից մեկը որոշ նորմայի ջերմաստիճան ունենալին է, որի սահմանից անցնելը (ցրտի կամ ջերմության կողմը) արդեն քայլայիչ ազդեցություն է ունենում։ Ապա ուրիմն, նշում է ինպելսը համարել սպիտակուցը համերժ անփոփոխ մի նյութ, չի կարելի Սկզբնական շրջաններում, երբ մեր երկիրը շիկացած մի միզապատություն էր ներկայացնում, գոյություն չունեին սպիտակուցային մարմինները։

Սպիտակուցի յուրահատկությունը, բարդությունն արդեն ցուցանիշ է այն բանի, որ այդ բարդ քիմիական նյութը—նյութի շարժման, փոխակերպման յուրահատուկ նոր որակի էտառի ոչ միայն քանակական, այլև որակային փոխակերպման արդյունք, եթև որակապես յուրահատուկ պրոցեսների՝ կենսական պրոցեսների միասնությունը կազմում է այն, ինչին մենք առում ենք՝ կյանք։

Էնգելսը համաձայն չէ մի շարք քիմիկոսների այն դիտողություններին, թե կենսական երեսությունները, հատկապես նյութերի փոխանակությունը, կարելի է տեսնել և անօրգանական աշխարհում։

Այդ քիմիկոսները մի շարք քիմիական ռեակցիաներ կատարելով պատրաստեցին արհեստական թղիջներ, որոնք շարժվում աճում էին, նրանց կարծիքով նույնիսկ տեղի էր ունենում նյութերի փոխանակություն։ Էնգելսը ծանոթ է Ռումբլերի, Կվիչկեի և այլոց փորձերին։ Այդ մեխսնիստ մատերիալիստների

Հգտումը — նույնացնելու կենդանի նյութի յուրահատուկ պրոցես-ները քիզիկո-քիմիական պրոցեսներին՝ չի բավարարում էնդել-սին էնդելսը չի ժխտում, որ «անօրգանական մարմինների մեջ էլ կարող է տեղի ունենալ նյութերի այդպիսի փոխանակություն և փաստորեն միշտ և ամենուրեք տեղի ունի, որովհետեւ ամենու-րեք տեղի ունեն քիմիական գործողություններ, թեպետև շատ պանդաղորեն: Բայց տարբերությունն այն է, որ անօրգանական մարմինների մեջ նյութերի փոխանակությունը քայլայում է նրանց, օրգանական մարմինների մեջ գոյության անելածնշտապայման է»:

Առնելով Տրաուբի «արհեստական բջիջների» մասին էն-դելսը նշում է, որ նրանց մեջ առաջ բերած «նյութերի փոխա-նակությունը» նյութի ներմուծումն է էնդոսմոսի շնորհիվ՝ ա-ռանց որևէ որակական փոփոխության, մինչդեռ կենդանի մարմինն ընդունելով որոշ նյութեր դրսից՝ փոխում է ընդունած նյութերի քիմիական կազմը, յուրացնում որոշ մասը և արտա-թորում է այնպիսի նյութեր, որոնք արդյունք են հենց իրա օրգանիզմի քայլայմանը և բոլորովին ուրիշ տեսակի նյու-թեր են:

Բնագետներն էնդելսի նման չեղացեցին նյութերի փոխա-նակության յուրահատկությունը, ընդհակառակը, նրանց ձգտութեք նույնացնել նյութերի փոխանակությունը — կենսական պրո-ցեսն անօրգան աշխարհում տեղի ունեցող քիմիական պրոցես-ներին: Եվ, եթե տարբերություն էլ տեսնում էին, այն էլ ոչ թե որակական էր, այլ միայն քանակական: Էնդելսին պիտի վերադրել այն, որ նա բնագետների առաջ կտրուկ կերպով դրեց սպիտակուցի յուրահատկությունը, ապա և կենդանի նյութեր յուրահատուկ որակներ ունենալու հարցը: Անա ինչպիսի բնորո-շում է առաջ նա կյանքի էության մասին: «Կյանքը սպիտա-կուցային մարմինների գոյածն է, որի էական մոմենտը նյու-թերի անդադրում փոխանակությունն է, նրանց շրջապատճառ ար-տաքին բնության հետ, երբ նյութերի այս փոխանակությունը դա-դարումէ, դադարում է նաև կյանքը և առաջ է գալիս սպիտակուցի քայլայում»**.

Էնդելսը կյանքն առանց սպիտակուցի չի պատկերացնում:

* Էնդելս, «Բնագետական դիակեկտիկա», էջ 48 (Ճանոթություն):

** Նույն տեղ, էջ 48:

«Ամենուրեք, —ասում է նա, —որտեղ մենք կյանք ենք տեսնում այդ կյանքը կապված է որևէ սպիտակուցային մարմնի հետ և ամենուրեք, որտեղ քայքայման պրոցեսին չենթարկված սպիտակուցային մարմիններ ենք գտնում, այնտեղ առանց բացառության նաև կյանքի երեւյթներ ենք տեսնում»*:

Ենգելսը նշում է կենդանի նյութի մի չափազանց բնորոշ յուրահատկությունը, այդ այն է, որ նրա քիմիական բաղադրիչ մասերն անընդհատ վերականգնման պրոցեսի մեջ են գտնվում։ Սպիտակուցը կայուն, միշտ միենույն գրության մեջ չկ լինում։ Ամեն մի տվյալ վայրկյանում նա հենց նույն ինքն է և միաժամանակ մի այլ բան։ Բնդ որում, այս երեւյթն այն պրոցեսի հետեանքով չի կատարվում, որին նա ենթարկվում է զբսից ինչպես այդ կարող է պատահել նաև մեռած մարմինների հետ։ Ընդհակառակը, կյանքը՝ սննդի և արտաթորման միջոցով տեղի ունեցող նյութերի փոխանակությունն ինքն իրեն կատարվող մի պրոցես է, որն ինքնահատուկ է բնածին է իր հեծանին՝ սպիտակուցին, առանց որի չի կարող կյանք լինել»**:

Ապա ենգելսը թվում է այն կենսական պրոցեսները, որոնք բխում են նյութերի փոխանակությունից. ղրանք են զբգուհանությունը, «որն արգեն գտնվում է սպիտակուցի և նրա սննդի փոխազդեցության մեջ» (Ենգելս), կծկվելը, աճելու ընդունակությունը, բազմացումը։

Սակայն ենգելսը տալով կյանքի բնորոշումը՝ ինքը հենց դտնում է, որ իր «տված սահմանումը բնականմար չափազանց անբավարար է, քանի որ նա ոչ միայն չի ընդգրկում կյանքի բոլոր երեւյթները, այլ ավելի շուտ սահմանափակվում է ամենապարզ երեւյթներով»***։

Այս հարցի նկատմամբ մի շարք բնագետներ փորձում են ուվիդիայի ենթարկել ենգելսի մտքերը և ասում են՝ իրեն թե ենգելսն անտեղյակ լինելով կենդանի նյութի, պրոտոպլազմայի վերաբերյալ իր ժամանակի տվյալներին՝ սխալմամբ շփոթել էր սպիտակուց և պրոտոպլազմա հասկացողությունները, իրը թե չգիտեր, որ պրոտոպլազման միայն սպիտակուցը չէ և այդ պատճառով էլ շարունակ խոսում է սպիտակուցի՝ որպես կենդա-

* Ենգելս, «Անակ-Դյուրինգ», էջ 34։

** Նույն տեղ, էջ 105։

*** Նույն տեղ, էջ 106։

Այս նյութի մասին, գրան վերադրելով այն բոլոր հատկությունները, որոնք բնորոշ են բարդ նյութի պրոտոպլազմայի համար:

Այդ դիտողությունները բոլորովին անտեղի են, կարեք չկա ամեննեին էնդելսի միտքը շտկելու, քանի որ նա շատ լավ պիտի և պրոտոպլազմա հասկացողության մասին, գիտեր, որ կենդանի նյութը—պրոտոպլազման—միայն սպիտակուցը չէ: Ճիշտ է, էնդելսը զատ հաճախ կրկնում, հիշատակում է սպիտակուցը, բայց նրա մոտ հանդիպում է և պրոտոպլազմա խոսքը: Նա գիտեր նաև, որ այդ պրոտոպլազմայի մեջ բացի սպիտակուցից կան նաև ճարպեր, ածխաջրեր, աղեր, մի խոսքով՝ շատ լավ պատկերացնում էր, թե ինչ բան է պրոտոպլազման:

Եվ եթե նա այնուամենայնիվ շարունակ խոսում է սպիտակուցի մասին՝ նկատի առնելով կենդանի նյութը և նույնիսկ կյանքի բնորոշումն էլ տվեց այդ ուղղությամբ, այսինքն՝ «կյանքը—որպես սպիտակուցային մարմինների գոյության ձև»—այդպիսով նա շեշտը դնում է սպիտակուցային նյութերի վրա, այդ նշանակում է, որ նա սպիտակուցին առանձնահատուկ տեղ չ վերագրում, շեշտում է, որ սպիտակուցային նյութերն են պրոտոպլազմայի այն հիմնական ֆակտորները, առանց որոնց կյանք չի կարող լինել:

Սպիտակուցի հատկություններն են առաջին հերթին ծառայում որպես հիմք կենդանի նյութի, պրոտոպլազմայի կենսական առանձնահատկությունների:

Էնդելսն ամեննեին չէր ուզում ասել, թե պրոտոպլազմայի միջի ոչ սպիտակուցային նյութերը նշանակություն չունեն:

Որ էնդելսի մոտ շեշտը սպիտակուցի վրա է դրված, այդ պարզ է: Սպիտակուցն է ամենաէական, ամենահիմնական օրգանական նյութը, որի առաջ գալով միայն ձևակերպվեցին կենսական առաջին, պրիմիտիվ արտահայտությունները:

Ամենաէականն այն է, որ էնդելսը տալիս է կենդանի նյութի, այսինքն պրոտոպլազմայի հության և զարգացման լուսաբանությունը:

Էնդելսը նշանակած է կենդանի նյութի մի բնորոշ յուրահատկություն, այսինքն՝ երկու հակագիր երևույթների—կյանքի և մահավան միասնությունը: Առանց մահի՝ կյանք լինել չի կարող: Բայց մահավան պրոցեսն օրգանական աշխարհում, կենդանի նյութի պարզացման տարրեր աստիճաններում միատեսակ արտահայտություն չունի: Մահավան պրոցեսն էլ ենթակա է էվոլուցիայի:

Ասել թե միաբջիջ օրգանիզմները, օրինակ, ինֆուլորիան, անմահ են, չի կարելի, եթե նույնիսկ մի ըոպե, ենթադրենք, թե նրանք «անվերջ» բաժանվում են: Ոչ մի հակասություն չկարնուագործիայի, միաբջիջ օրգանիզմների և բազմաբջիջ օրգանիզմների մահվան ակտիմեջ: Մահն անհրաժեշտություն է, բայց կարող է լինել մահ և առանց դիակի (օրինակ՝ ինֆուլորիայի նկատմամբ): Մահը պիտի պատկերացնել որպես անհատականության ոչնչացում: Այդ տեսակետից էլ սխալ է ասել, թե անընդհատ բաժանվող միաբջիջները, օրինակ՝ ինֆուլորիան, անմահ են: Կախ ապացուցված էր միաբջիջներն էլ անվերջ չեն կարող բազմացնել Գալիս է և գեղրեսիայի, քայլայման, ապա և մահվան ըոպեն: Ել վերջապես բաժանվելով (կամ երկարատև բազմացումից հետո երկուսի ձուլվելով—«կոպուլացիա») նախկին՝ ինֆուլորիաները կորցնում են իրենց անհատականությունը: Արդեն մեր առաջն է նախկին ինֆուլորիայի անհատական մահը, մահն առանց դիակի և սուսացված երկու քիջները (կամ կոպուլացիայի գեղրում—մեկը) արդեն նոր անհատներ են: Նախկին ձևը, որպես անհատ, դադարում է գոյություն ունենալուց: Իսկ բարդ կենդանու մահվան գեղրում առաջանում է դիակի:

Էնդեմն ասում է, որ զեռ իր ժամանակ գիտական չէր համարվում այն փիզիոգիիան, որը չէր ընդունում մահը՝ որպես կյանքի էական մոմենտ: Կյանքի բացասումն արդեն հենց կյանքի մեջ կա, արդեն սաղմանային վիճակում կյանքի մեջ կա անխոսափելի մահը: Էնդեմն ասում է, «կյանքի դիակեկտիկական ըմբռնումն էլ ուրիշ բան չի առում: Սակայն ով մի անգամ ընկամիշտ ըմբռնել է այդ, նրա համար այլիս ոչ մի իմաստ չունի հոգու անմահությունը»*, «Ապրել՝ նշանակում է մեռնելը»:

Խոսելով կենդանի նյութի էության մասին՝ էնդեմը բնականաբար չէր կարող կանգ չառնել նյութի որակային այն փոփոխության վրա, այն թորիչքի վրա, որ տեղի ունեցավ բնության մեջ, երբ անկենդան նյութերից ձևակերպվեց կենդանի նյութը:

Կյանքի ծագման հարցում վիտավիստները կյանքի մշտնջեանականության միտքն են առաջադրում, ասելով թե՝ կյանքի

* Էնդեմ, «Բնության դիակեկտիկա», էջ 16.

գոյացման պրոցես չի եղել, քանի որ նա միշտ էլ եղել է, կամ չի ընդունելով նրա առաջանալն անօրդան նյութերից՝ միաժամանակ ավելացնում են, որ այդ գեռ բավական չէ, միայն նյութականը չի կարող կյանք առաջացնել և ասում են, թե՝ ինչ որ արտաքին, աննյութ մի ուժ մտել է գոյացած քիմիական բարդ միացության մեջ և բերել իր հետ կենսունակություն, ապա ուրեմն կյանք ներշնչել նրան, և այդ կենսութին (կամ ուրիշ արտահայտությամբ՝ հոգի, արխեյ, էական ուժ, էնտելեխիա և այլն) են վերագրում կենսական պրոցեսների զեկավարությունը, կանոնավորումը:

Էնդելսը վերոհիշյալ տեսակետին ոչ մի արժեք չի տալիս նա հշում է, որ բնագետների և հատկապես Դարվինի թերությունը կարելի է համարել այն, որ սկզբնական կյանքի ծագման հարցով չեն զբաղվել նա չի ասում, թե Դարվինն այդ հարցում համամիտ էր աստվածաբանների հետ, ինչպիսի կարծիք Դարվինի մասին կա նույնիսկ բնագետների որոշ շրջանում: Էնդելսն այդ հարցում դուրս է գալիս որպես Դարվինի պաշտպան: «Դարվինը, — ասում է նա, — իր «Տեսակների ծագում»-ի 6-րդ հրատարակության նախավերջին էջում պարզորոշ կերպով ասում է, որ բոլոր էակները նա համարում է ոչ թե «առանձին ստեղծագործություններ, այլ մի քանի սալավարիկ էակներից ուղղառ կի գծով առաջացած հաջորդներ»*:

Կյանքի ծագման հարցում անշուշտ բնագետներն ունեն խոշոր բաց, լուրջ կերպով չեն զբաղվել նրանով: Այդ ար ձանագրում է նաև էնդելսը. — «Անը ամբողջ բնագիտությունը դժբախտաբար արքանի է այդ կշտամբանքին: Որտեղ կտրվում է ծագման թելլ, այնտեղ նա կանգ է առնում: Առանց ծագման նա տակավին չի կարողացել օրդանական էակներ ստեղծել. մինչև իսկ չի կարողացել հասարակ պլրոտոպլազմա կամ այլ սպիտակուցային մարմիններ ստեղծել քիմիական տարրերից: Հետեւ առաջանական ծագման մասին առայժմ որոշակի այն կարող է ասել, որ դա քիմիական ճանապարհով պիտի առաջանար

* Էնդելս, «Անտի-Դյուրինդ», էջ 93:

** Նույն տեղ:

ննթաղրում էին, թե նույնիսկ բարդ կազմություն ունեցող օրգա-
նիզմները կարող էին ինքնաբերաբար առաջ գալ անկենդան
նյութից:

Այդ բացատրությունը նա համարում է անբավարար և
անհիմն, քանի որ հայտնի է, ինչպես ասում է Էնգելսը, որ «Քի-
միան՝ մեռած օրգանական մարմինների քայլայման պրոցեսի
վերլուծության միջոցով հաստատեց, որ այդ պրոցեսն անհրա-
ժեշտորեն տալիս է, ամեն մի հնատագա քայլում, մեռած, անօր-
գանական աշխարհին ավելի մոտ կանգնած արդյունքներ»*:

Էնգելսը նկատում է, թե «Ամենից շուտ քայլայվում է
ըջի կազմակերպման էական արդյունքը՝ կրողը՝ սպիտակուցը,
և մինչև այժմ դեռ չեն կարողացել կրկին ստանալ այն համա-
րական հղանակով»**: Այս ասելով, ինարկե, նշում է բնագետ-
ների այն թերությունը, որ նրանք չեն կարողացել սպիտակուցը
պատրաստել սակայն այդ չի նշանակում, թե էնգելսը ժխտում
է օրգանական նյութերի սինթեզը: Հենց ինքը՝ էնգելսն արձա-
նազրում է այն նշանավոր գյուտը, որ 1828 թ. արեց Վելերը՝
պատրաստելով միզանյութ: Օրգանական նյութերի սինթեզի
հնարավորությունն ապացուցված էր: Ինչ վերաբերում է սպի-
տակուցին, պիտի ասել որ էնգելսի ժամանակ այդ հարցը լուծ-
ված չէր, և միայն էնգելսից հետո էր, որ երկու բնագետ-քի-
միկուներ պատրաստեցին սպիտակուցային նյութեր (մեկը — Թի-
շերը, մյուսը վերջին մեռած ուստի բիոֆիմիկոս Բախը):

Էնգելսը չի ժխտում արխոգենեզը (կյանքի գոյացումն ան-
կենդան, անօրգանական նյութերից), սակայն այդօրինակ ծա-
գում վերաբրում է ոչ թե բարդ օրգանիզմներին, որոնց շարքին
նա դասում է նույնիսկ բակտերիաներին, դրոֆին, ինֆուզո-
րիաներին, այսինքն՝ այնպիսի օրգանիզմների, որոնք կտրուկ
սահմանված, ձևակերպված քջիջներ են ներկայացնում իրենցից:
Իսկ ինֆուզորիան նույնիսկ այնքան բարդ է, որ ունի առան-
ձին փունկցիաներ կատարող մասեր (ինչպես ասում են՝ օրգա-
նոիզմներ)՝ այլ գրանցից էլ ավելի պարզ ձևերին:

Էնգելսն անհիմն է համարում բնագետների այն փորձերը,
երբ նրանք աշխատում էին օրգանական հեղուկներից օրգա-
նիզմներ առաջացնել:

Հարցի լուծման այդպիսի փորձերն անհրաժեշտ են, բայց
ապարդյուն. ուրեմն ապարդյուն էին Պաստյորի փորձերն այդ

* Էնգելս, «Բնության գիտեկարկա», էջ 29.

** Նույն տեղ, էջ 40:

պըորլեմի շուրջը, քանի որ հարցի գրութիւն արմատապես սխալ էր: «Պատոյրի փորձերն այս ուղղությամբ,—ասում է էնգել-սը, —անօգուտ են: Ով հավատում է այս հնարավորությանը, Պատայորը միայն այս փորձերի միջոցով չի կարող բնավ ապացուցել դրա անկարելիությունը: Բայց այդ փորձերը կարեոր են, որովհետեւ լույս են սփռում այդ օրգանիզմների, նրանց կյանքի, նրանց սակալերի վրա և այն»*:

Այլ կերպ ասած՝ ոչ ինֆուզորիան և ոչ էլ նույնիսկ բակտերիաները ոչ մի գեպքում չեն կարող առաջանալ անկենդան նյութից և բոլորովին զուր են այդ ապացուցելու կամ ժըխտելու համար փորձեր կատարել:

Էնգելսի ժամանակ բնակետներից շատ շատերն իսկապես հավատում էին, որ ինֆուզորիաների, բակտերիաների նման միաբջիջ օրգանիզմներ՝ կարող են առաջանալ ինքնագոյացմամբ, անօրգանական նյութերից: Հետազա ուսումնասիրություններից պարզից, որ նույնիսկ բակտերիաներին չի կարելի համարել օրգանական ամենաստորին ձեւերը, որովհետեւ սրանք ձևավորված բջիջներ են, ունեն բջջաթաղանթ, քրոմատինային նյութ, մի խոսքով նրանք արդին ունեն բարգացման որոշ հատկանիշներ: Բջջի գոյացման պրոցեսը երկարատև պրոցես էր, և ձեւակերպված բջիջը չեր կյանքի ամենաառաջին արտահայտությունը: Այդ շեշտում է նաև էնգելսը: «Այն օրից սակայն, —ասում է նա, —երբ մենք ճանաչել ենք կառուցվածքից զուրկ մոներները, անմտություն կլինի ցանկանալ թեկուզ և մեկ առանձին բջջի ծագումը բացատրել միայն ուղղակի անկենդան նյութից՝ փոխանակ կառուցվածքից զուրկ կենդանի սպիտակուցից, անմտություն կլինի հավատալ թե ինչ որ հոտած ջրի միջոցով կարելի է ստիպել բնության, որ 24 ժամվա մեջ անլայն, ինչի համար պահանջվել են հազարամյակներ»**:

Ուրիմն, կյանքի ինքն իրեն առաջանալն անկենդան նյութերից, անժխտելի փաստ է, այդ ձեռվ առաջացել է ամենապարզ կյանքը: Թերեւ գիտությունն առաջ գնա, փորձնականութեն հաջողվի առաջացնել կենսական ամենապարզ նյութը: Դրա դեմ էնգելսի կարծիքով առարկելու հիմք չկա: Եվ «այն, ինչ որ չելմհոլցն ասում է արհեստական կյանք ստեղծելու բոլոր փոր-

* էնգելս, «Բնության դիալեկտիկա», էջ 40:

** նույն տեղ, էջ 40:

Երի ապարդյուն լինելու մասին, պարզապես մանկամտությունք*,

Նույնիսկ Հեկկելի մոներները (որոնց գրությունը կասկածի տակ է) չեն կարող համարվել սկզբնական օրգանական ձևեր: Վերջիններս եղել են շատ պարզ, անստրուկտուր գանգվածներ, այնպիսի սպիտակուցային պարզ մարմիններ, որոնց վրա նկատվող կենսական երևույթներն ամենապրիմիտիվ արտահայտություն ունեին:

Էնգելսը հավատում է, որ երբեմ կհաջողվի կենդանի նյութ պատրաստելու գեթե երբեմ, —ասում է նա, —կհաջողվի քիմիականորեն կազմել սպիտակուցային մարմիններ, նրանք, անկասկած, կցուցազրեն կենսական երևույթներ և որքան է թույլ կամ կարճատև լինեն նրանք, —կկատարեն, նյութերի փոխանակությունը**:

Արդեն ասացինք, որ էնգելսի ժամանակ Վելիքը պատրաստեց միզանյութ: Այդ գիտեր էնգելսը և նա հավանական է համարում նաև այն, որ սպիտակուցային նյութն էլ կը սինթեզվի: Եվ կյանքի հարցը, նրա էությունը կպարզվի, երբ լրիվ իմացվի սպիտակուցային նյութերի քիմիական բաղադրությունը, կազմությունը քայլուց քանի որ, —ասում է էնգելսը, —մեր գիտելիքներն սպիտակուցի քիմիական կազմի վերաբերյալ մնում են արդի գրության մեջ, մինչև որ մենք գեռ չենք համարձակվում մտածել սպիտակուցի արհեստական ստեղծագործաման մասին, այսինքն՝ հավանական է, մոտակա հարյուրավոր տարիների ընթացքում, —ապա ուրեմն ծիծաղելի է զժգոնելի թե մեր բոլոր ջանքերը իդերե են ենում»***:

Թեև մի տեղ էնգելսն ասում էր, թե գեռ չի հաջողվել սպիտակուցի սինթեզը, որի հետ նա կապում է կենդանի նյութի պատրաստման հնարավորությունը, բայց վերը բերած տողերում նշում է, որ կարիք չկա գանգատվելու անհաջողությունների առթիվ, հարցը չի փոխվում, թեկուզ հարյուրամյակներ էլ անցնի, այնուամենայնիվ սպիտակուցի սինթեզը կիրագործվի:

Ոչ ոք այժմ չի կարծում, թե առաջին օրգանիզմները եղել են Հեկկելի նշած մոներները և ոչ էլ նույնիսկ բակտերիաները, որոնք ունեն կազմության որոշ բարդություն և որոնց գոյու-

* Էնգելս, „Диалектика природы“, 1939 г., стр. 34.

(հայերեն, էջ 46):

** Նույն տեղ, էջ 35 (հայերեն, էջ 47):

*** Նույն տեղ:

թյունը պահանջում է ուրիշ օրգանիզմների գոյություն, որով և նետե բակտերիաները սնվում են օրգանական նյութերով: Ուշը բակտերիաներն առաջ գալով կամ պիտի իրար ուտեին կամ էլ ամենի պարզ օրգանիզմներ արդեն պիտի լինեին, որ նրանցով կարողանային սնվել բակտերիաները:

Էնգելը հետեւալ ենթադրությունն է անում. «Ծագած առաջին սպիտակուցային գուղձերը (կնծիկները) պիտի ընդունակ լինեին սնվելու թթվածնով, ածխաթթվով, ամոնիակով և իրենց շրջապատի ջրում լուծված միքանի աղերով: Այն ժամանակ գեռ օրգանական սննդանյութեր չկային, որովհետեւ նրանք չէին կարող իրար լափել»*:

Անշրջաշ առաջին օրգանիզմներն ավելի մոտ էին բուսական ձևերին, որովհետեւ միայն բույսերն ունեն ընդունակություն՝ անմիջապես անօրգան աշխարհի նյութերը յուրացնել և իրենց մեջ օրգանական նյութ պատրաստել: Թե որո՞նք են դըրանք, — մինչեւ այժմ էլ այդ հարցը լուծված չէ: Իսկ թե իսկապես մինչեւ այժմ ամենապարզ համարված բակտերիաները նույնիսկ չեն կարող համարվել ամենասառըին, ամենասկզբնական ձևեր, — զբան ապացույց կարող է ծառայել արդի գիտության մի հետաքրքիր նվաճումը: Հայտնաբերված են բակտերիաներից առավել ևս պարզ օրգանիզմներ, բակտերիաների բակտերիաները այսպես կոչված՝ բակտերիոֆացիներ, որոնց գոյությունն արդեն ապացուցված է էքսպերիմենտալ մի շարք գիտուվություններով: Այդ ավելի մանր բակտերիաները զարդանալով բակտերիալ միջավայրում՝ հիվանդացնում, քայլքայում են սովորական բակտերիաներին և պատճառ դառնում նրանց մահացման, ոչնչացման: Այդպիսով պարզվեց, որ սովորական բակտերիաներն են ենթակա են որոշ քայլքայիչ հիվանդությունների: Այդ պատճառով էլ սովորական բակտերիաներին քայլքայող ավելի պարզ օրգանական ձևերին անվանեցին բակտերի ֆազմներ (բակտերիաներ լափողներ)***: Դեռ չի հաջողվել ամենաուժեղ միկրոսկոպով անգամ տեսնել, ուսումնասիրել դրանց, իսկ թե վերջիններու իրոք գոյություն ունեն, — կասկածից դուրս է և իմացվում է նրանց առաջ ըերած գործողություններից: Բայց այդ բակտերիոֆազներին համարել որպես ամենասկզբնական օրգանական ձևեր:

* Энгельс. „Диалектика природы“, стр. 35 (հայերեն, էջ 47):

** Բակտերիոֆազներին հայտնաբերեց 1921 թ. Դերեւս. սակայն նրանց լինչպիսի լինելը դեռ պարզված չէ:

այդ ևս չի կարելի, քանի որ նրանք էլ սրվում են օրգանական նյութերով (բակտերիաներով):

Ուրեմն էնդելսի կարծիքը չի հակասում դիտության այժմյան տվյալներին: Նրա ասածը ճիշտ գուրս եկավ, այսինքն՝ ոչ բակտերիաները և ոչ էլ Հեկկելի մոներները չեն կարող ամենաառաջին օրգանական ձևերը լինել:

Բնության մեջ գոյություն ունեցող ամենաառորին օրգանիզմների մեջ էնդելսը նշում է այնպիսի ձևեր, որոնք բջջից էլ ավելի պարզ կառուցվածք ունեն, օրինակ՝ պրոտամյորան—սպիտակուցային մի զանգված, որ չունի որևէ դիֆերենցիացիա: և եթե սրանք ունեն նմանություն և կապակցություն բարձր օրգանիզմների հետ, առաջ այդ այն է, «որ նրանց էական բաղկացուցիչ մասը սպիտակուցն է կաղմում, և սրա հետեանքով էլ նրանք կատարում են սպիտակուցին հատուկ փունկցիաներ, այսինքն՝ ապրում են և մեռնում»*:

Այսպիս ուրեմն, էնդելսը գծեց նյութի էվոլուցիայի էտապները, այն պրոցեսը, որ անօրգան նյութը վերածեց նոր որակի՝ նյութի—սպիտակուցի: Իսկ ամենաառաջին օրգանիզմները պիտի մնեին բույսերը, որովհետև նրանց սպիտակուցն ընդունակ էր անվել անօրգան նյութերով:

Եհրենք այդ պրոցեսի ամփոփումը էնդելսի պատկերացումով. «Վերջապես եթե բարեխառնությունը իջնում է այն առափնյան, որ առնվազն մակերեսույթի որևէ տեղում չի անցնում այն սահմանը, որի մեջ սպիտակուցն ընդունակ է կյանքի, առանպատափոր քիմիական նախապայմաններում, կազմակերպվում է կենդանի պրոտոպլազման: Թե որոնք են այդ նախապայմանները—տակավին այժմ էլ անհայտ է մեզ: Ել այդ զարմանալի չէ, քանի որ մինչ այժմ որոշված չէ սպիտակուցի քիմիական փորմուլան, և մենք նույնիսկ չգիտենք, թե որքան քիմիապես աարբեր սպիտակուցային մարմիններ կան»**:

...«Թերեւս հազարամյակներ են անցել, մինչև որ ստեղծվել են զարգացման առաջին պայմանները, և այս անձեւ սպիտակուցից, <որի մասին Օկենը մարգարեաբար...»>, կորիզի ութաշանթի կազմվելու միջոցով, գոյացել է առաջին բջիջը»***:

* էնդելս, «Անտի-Դյուրինգ», էջ 101:

** էնդելս, «Բնության գիալեկտիկա», էջ 147—148:

*** Նույն տեղ, էջ 148:

Այնուհետեւ բջջի առաջ զալով՝ սկսեց ձեակերպվել ամբողջ օրդանական աշխարհը: «Առաջին անգամ զարգացել են, ինչպես այդ կարելի է հնթագրել պակեռնառոլոգիական տարիզրության: բոլոր ավյալներից, անրջիջ և բջիջավոր պրոտիստների անթիվ տեսակները, որոնց մասին վկայում է միակ Եօզօն Canadense-ն որոնցից մի քանիսը հետզհետեւ տարբերակվելով՝ դարձել են, առաջին կենդանիները»*:

Մենք արդեն նշեցինք, որ էնգելմն օրդանական նյութերի հատկապես սպիտակուցի սինթեզի իրագործումը ժամանակի հարց էր համարում: Դեռ ավելի վաղ քան կարծում էր էնգելով, քիմիկոսները մոտեցան կենդանի սպիտակուցի սինթեզին: Իրագործեցին այդ սինթեզի որոշ էտապը, ֆիշերը ամբողջը համարեցից թափանց կալում ցիան և ֆորմալդեհիդից պատրաստեցին սպիտակուցանման նյութերը: Բախի պատրաստած սպիտակուցն այնքան մոտ էր իր հատկություններով բնական սպիտակուցին, որ հնարավոր էր օգտագործել որպես աննդարար նյութ բակտերիաների համար, և վերջիններս չեն հրաժարվում արենտատական սպիտակուցից:

Իհարեւ, չի կարելի ասել, թե միայն սպիտակուցի առաջանալով՝ արդեն լրիվ ձեակերպվեց կյանքն իր բոլոր բարդ կենսական արտահայտություններով: Բայց և այնպես անշուշտ սպիտակուցի առաջանալը կյանքի առաջացման պրոցեսի ամենաառաջին և հիմնական էտապն էր: Կյանքի առաջին արտահայտությունը, թող այն լինի շատ պրիմիտիվ, անշուշտ կապված է սպիտակուցային նյութի հետ: Սպիտակուցի առաջանալն անօրդան նյութերից նյութի փոխակերպման, թռիչքային զարգացման որակապես մի նոր էտապ է: Քիմիական նյութերի քառակական փոփոխությունները պսակվում են որակական փոփոխություններով, գոյանում է կենդանի սպիտակուցը և ապա բարդացմամբ՝ պրոտոպլազման, որի յուրահատկություններն արդեն տարբերվում են նրա բաղադրիչ նյութերի հատկություններից: Ահա այս որակային փոփոխության պրոցեսն առանձնապես շեշտեց էնգելով և այդպիսով հարված հասցրեց մեխանիստ մատերիալիստներին, որոնք այս պրոցեսում չեն տեսնում և ոչ մի թռիչք, ոչ մի նոր որակ, չեն համարում կենդանի նյութի

* Էնգելս, «Բնության դիալեկտիկա», էջ 118:

առաջ դալը որպես նյութի շարժման մի նոր, ուրուցն էտապ յուրահատուկ արտահայտություն:

Էնդեւսն անհիմն դարձեց այն տեսակետը, թե կենդանի նյութը մի չափազանց բարդ քիմիական միացություն լինելով միայն քանակապես է տարբերվում անօրգան միացություններից, թե կենդանի նյութն առանձնահատուկ նյութ չէ, թե նա չունի յուրահատուկ պրոցեսներ, թե նրա մեջ կատարվում են միայն անօրգանական աշխարհի ֆիզիկո-քիմիական պրոցեսները:

Ինարկե, բնագետի համար նորություն չեն էնդեւսի որոշ մտքերը կենդանի նյութի էվոլուցիայի էտապների մասին: Այս կամ այն չափով, այս կամ այն մատերիալիստ բնագետները (Հեկկելը և ուրիշները) տվել են այդ պրոցեսի նկարագիրը և էնդեւսն էլ հիմնականում հենվում է այդ տվյալների վրա, բայց էնդեւսն այդ հարցին մոտեցել է այլ լուսաբանությամբ, բոլոր բովին այլ տեսանկյունով է մեկնարաներ: Նույնիսկ մատերիալիստ բնագետներն այդ հարցում ազատ չմնացին վիտալիստական կամ մեխանիստական մեկնարանություններից: Էնդեւս մանրակրկիտ կերպով ծանրացել էր բնագիտության տվյալներին և եթե կը կնուում էր մի շարք անվանի բնագետների որոշ մտքեր, ապա այդ մտքերը ենթարկված էին քննադատության և վերը ծման: Շատ քիչ բնագետներ էին այսպես սուր գնում կյանքի ծագման, կյանքի էության պրոբլեմները: Եվ ոչ մի բնագետի չհետևելով՝ էնդեւսը բոլորվին ինքնուրուցն գրեց կենդանի նյութի որակային յուրահատկությունների հարցը նյութի դարգացման, փախակերպման ընթացքը:

Նյութի քանակական դարգացման ընթացքը ժամանակ առ ժամանակ ընդհատվում է թոփչքով, որակային փոփոխություններով: Ածխածնային քիմիական որոշ նյութերի քանակական դարգացմանը հաջորդում է նյութի որակապես մի այնպիսի նոր բարդ ձևավորում, ինչպիսին է սպիտակուցային զանգվածը պլրիմիտիվ, որոշ կենսական հատկություններով: Ապա գալիս այդ սկզբնական կենդանի նյութի աստիճանական բարդացումը ինչպես բջջակորիզի ձևավորումը, բջջի ձևավորումը, այնունեմու երկու ուղղությամբ, ինքնուրուցն ձանապարհներով զարգանուեն կենդանական և բուսական աշխարհների ձևերը:

Ահա կենդանի նյութի կրած դիալեկտիկ դարգացման պրցեսն է, որ էնդեւսը շեշտակի դրեց բնագետների առաջ՝ հակ-

գրեկով իր լուսաբանությունը մեխանիստ մատերիալիստների մետաֆիզիկ տեսակետին էնդելսի մեկնաբանությունը, այլ զերպ ասած՝ մարքսիստական մեթոդորդիքան մեզ օդնում է նոր ակնոցներով, ավելի թարմ ու բնական լուսաբանությամբ մռատենալու բիոլոգիական ամենաճիշմանական, ամենաէական պրօբ-լեմներից մեկին—կենդանի նյութի էռթյուն և ծագման: Եվ միայն այս մեթոդորդիքայով հնարավոր է դառնում ավելի լավ և ճիշտ լուսաբանել վերոհիշյալ պրոբլեմից բխող մի շարք ուրիշ բիոլոգիական հարցեր և մանավանդ այն հարցերը, որոնք կապված են կյանքի զարգացման (էվոլուցիոն ուսմունք) և առանձնապես մարդու ծագման և զարգացման հարցերի հետ:

Էնդելսը կենդանի նյութի զարգացման վերլուծումը չի սահմանափակում միմիայն կյանքի առաջացման հարցով: Նրա վերլուծող միտքն ավելի ընդարձակ բնագավառ է մտնում, այն է՝ կյանքի բարդացման, օրգանիզմների էվոլուցիայի բնագավառը:

Տարբեր որակական օրգանիզմներ լինելով, այնուամենայնիվ, բույսն ու կենդանին մեկ աղբյուրի ծնունդ են, հետեւաբար նրանց մեջ անպայման պիտի լինի օրգանական կապ, ուրոշ կենսական պրոցեսների ընդհանուր նմանություն:

Դյուրինգի այն խոսքերին, թե՝ «բույսերն, ընդհակառակը, միանդամայն և ընդմիշտ զուրկ են զգացողության որևէ նշույթից, ինչպես և զգացողության որևէ հակումից», էնդելսը պատասխանում է, թե «զգացողությունն անհրաժեշտորեն կապված չէ ներվերի հետ, այլ սպիտակուցային որոշ մարմինների հետ, որոնք ճշգրիտ կերպով տակավին որոշված չեն»: Այնուհետև նկատում է. «Միթե զուրկ են զգացողության ամենաթույլ նշույթից, կամ նույնիսկ զգացողության որևէ ընդունակությունից այն զգայուն բույսերը, որոնք ամենափոք շըփումից ծալում են իրենց տերենները և փակում իրենց ծաղիկները, կամ թե այն բույսերը, որոնք միջատների են ուսում»*:

Շարունակելով այդ միտքը՝ էնդելսը նշում է, որ կանայնպիսի պարզ կենդանիներ, որոնք չունեն զգացողության հա-

* Էնդելս, «Անտի-Դյուրինգ», էջ 102:

մար հատուկ ներվային ապարատ (հավանական է, նկատի է առանում միաբջիջ կենդանիներին) և այդ ապարատը կանոնավորապես զարգացած երևան է գալիս միայն որդերից սկսած, Եթե կանոնավոր ապարատ ասելով հասկանանք զգացողության համար զոյություն ունեցող հատուկ ներվային բջիջներ, այդ գեղաքում էնդելսի նշան կենդանական աստիճանը մի քիչ պիտի իջեցնենք, քանի որ աղեխորշավորներն (ավելի ստորին կենդանիներ, քան որդերը, օրինակ, հիդրա) արդեն ունեն հատուկ ներվային բջիջներ: Սակայն այս հանդամանքն էական չէ և չնաեմացնում էնդելսի հիմնական այն միտքը, որ զգացողության (ներվային սիստեմ ունենալու) հիման վրա ոչ մի գեղաքում չի կարելի իրարից բոլորովին բաժանել բույսն ու կենդանին և չտեսնել օրգանական սերտ կապակցություն բուսական և կենապանական աշխարհների միջև:

Էնդելսն այնքան լավ տեղյակ էր այդ հարցին, որ նույշնիսկ զիտեր այն ձեւերի մասին, որոնք միջին տեղ են բռնում. բույսի և կենդանու, երկու տարրեր աշխարհների միացման կամուրջ են ներկայացնում: Նա ասում է, «Որ այս միջանկյալ ձեւերը գոյություն ունեն, որ իրոք այնպիսի օրգանիզմներ կան, որոնց մասին բացարձակապես չենք կարող՝ ասել՝ արդյոք նրանք բույսեր են, թե կենդանիներ, որ ուրիշն ընդհանրապես մենք չենք կարող բույսերի և կենդանիների միջև մի որոշակի սահման գծել, — ճենց այս հանդամանքը Պ. Դյուրինգի համար տրամաբանական պահանջ է դառնում»*:

Կյանքը, օրգանական աշխարհը, պետք է զիտել որպես մի միասնություն, ամբողջություն և այդ միասնության աղբյուրը տեսնել անկենդան աշխարհում: Բույսը և կենդանին թեև տարրեր օրգանիզմներ են, բայց նրանց կենդանություն տվող նյութը միևնույն նյութն է և այդ նյութերի ծագման վայրը միևնույն սկզբնական ընդհանուր աղբյուրն է — նախ՝ ամենապարտ սկզբնական անբջիջ կենդանի զանգվածը, իսկ սրա ծագման աղբյուրն էլ անկենդան աշխարհի նյութերը:

Բնականաբար, էնդելսը չէր կարող առանձնակի ուշադրություն չդարձնել օրգանիզմների էվոլուցիայի հարցի վրա: Էնդելսը չբավականացավ միայն Դարվինի ուսումնասիրությամբ: Մարքսին զբած նամակներից երեսում է, թե որքան լուրջ էր էն-

* Էնդելս, «Անտի-Դյուրինգ», էջ 101:

գելսն ուսումնասիրել էվոլուցիոն ուսմունքը, որի մի շարք պրոբ-
լեմներն իրենց շուրջն ահազդին բանավեճ են առաջ բերել:

Էնգելսը պատմականորեն մոտենալով էվոլուցիոն ուսմունքին, նախ ուսումնասիրեց Դարվինի նախորդներին՝ ծանրթառ-
նալով էվոլուցիոն գաղափարի շուրջն առաջ եկած պայքարին:

Դարվինն էնգելսի վրա մեծ տպագորություն էր թողել՝
բայց էնգելսը բնագետների նման կուրորեն անխտիր չընկունեց
գարվինիզմի բոլոր դրույթները:

Հիմնականում ողջունելով դաշվինիզմը՝ նա միևնույն ժա-
մանակ քննադատաբար վերաբերվեց նրան, մարդուստական
մեթոդուգիտայով մոտեցավ նրա սկզբունքներին, շտկեց, լրաց-
րեց նրա որոշ հարցերը (օրինակ՝ մարդու ծագման հարցում)՝
այնպես, ինչպես մինչև օրս էլ չի արել և ոչ մի բնագետ:

Այս ի՞նչ է ասում էնգելսը Դարվինի մասին. «Ընդհանրա-
պես Դարվինը, որ ևս հենց այժմ կարդում եմ, հիանալի է: Այդ
բնագետառում թեոլոգիան գեր կործանված չէր, իսկ այժմ այդք
արված է: Բացի այդ՝ 'մինչև այժմ չի եղել այդպիսի հոյակապ
փորձ բնության մեջ կատարվող պատմական պլոցեսն ազա-
ցուցելու և այն էլ այնպիսի հաջողությամբ: Անգլական կոպիս
մեթոդի հետ, իհարկե, պիտի հաշտվենք»*:

Էնգելսի առելով՝ Դարվինի տված փաստերը, իհարկե, որոշ
լուսաբանությամբ՝ մեծ օժանդակություն են ցույց տալիս մարդու-
ստական աշխարհայցքի բնապատմական հիմնավորմանը**:

Բնագիտության զարգացման պատմության մեջ երեք նվա-
ճումներ—ըջի հայտնաբերումը, էներգիայի փոխակերպման օ-
րենքը և էվոլուցիոն ուսմունքն՝ ըստ էնգելսի՝ ունեցան խոշոր
նշանակություն, որովհետեւ նրանք հսկայական քայլերով զար-

* Маркс и Энгельс, „Сочинения“, т. 22, стр. 448.

** Հետաքրքրական է այստեղ նշել նաև Մարքսի ու Լենինի կարծիք-
ները Դարվինի մասին: Էնգելսին գրած նամակում (19 դեկ. 1860 թ.) Մարք-
սը ասում է, որ «Կարդացի Դարվինի «Ճեսակների ծագումը» գիրքը: Թեև
շարադրված է կոպիտ, անգլիակարի, բայց այդ գիրքը մեր հայացքներին
բնապատմական հիմք է տալիս»:

Լառալին գրած նամակում (16 հունվարի, 1861) ասում է. «Դարվինի-
աշխատությունը շատ թանկարժեք է և ինձ համար պիտանի է որպես պատ-
մական դասակարգային պայքարի բնապատմական հենակետ»:

Էնգելսը, իր մի գրքում «ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես
են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» (Երկեր, հատ. I, էջ 82):

գացըին բնության մեջ կատարվող փոխադարձ կտակակցության պրացեսների ճանաչողությունը» («Լյուդվիգ Ֆեյբրախ», էջ 102): Իսկ էվլուցիոն ուսմունքը (Դարվինը) առաջին անգամ ապացուցեց, «թե այժմ մեզ շրջապատող օբյանի դիմները, չբացառելով նաև մարդը, հանդես եկան իրեն հետևանք սկզբնապես միաբջիջ մի քանի սաղմերի զարգացման երկարատև պրոցեսի, իսկ այդ սաղմերն իրենց հերթին, գոյացել են քիմիական ճանապարհով առաջացած պրոտոպլազմայից կամ սպիտակուցից» (Լյուդվիգ Ֆեյբրախ», էջ 102):

Նույն գրքում (էջ 102) էնդեմն ասում է, որ այդ երեք նշանագոր նվաճումները, ապա և մի շարք այլ նվաճումներ բնագիտության բնագավառում պարզեցին բնության առանձին բնագավառների երկույթների միջն եղած կազը, նաև «այն կազը, որը միացնում է այդ առանձին բնագավառները: Այսպիսով, էմպիրիկ բնագիտության ձեռք բերած տվյալները մեզ թույլ են տալիս կազմելու բնության իրեն մի կապակցված ամբողջության բավական սիստեմատիկ պատկերը»:

Դարվինի ժամանակ և նրանից հետո բազմաթիվ գիտնականներ խոսել գրել են դարվինիզմի մասին, վերանայել, լրացրել են Դարվինի այս կամ այն տվյալները: Դարվինիզմի մասին լույս են տեսել բազմաթիվ հանրամատչելի աշխատություններ, սակայն ոչ մեկը, մանավանդ բնագետներից, չի մոտեցել դարվինիզմին այն տեսակետով, ինչպիս մարքսիզմի կլասիկ-

գրում է: «Ինչպես որ Դարվինը վերջ դրեց այն հայացքներին, ըստ որի գենդանեների և բույսերի տեսակները կապակցված չեն միմյանց հետ, պատճենագան են, ևստծուց ստեղծված» ու անփոխելի և առաջին անգամ միանգամայն գիտական հողի վրա գրեց բիոլոգիան՝ հաստատելով տեսակների փոփոխելիությունը և նրանց հաջորդականությունը, այնպես էլ Մարքսը վերջ գրեց այն հայացքներին, որի համաձայն հասարակությունն անհատնեցի մի մեխանիկական ազգեգատէ (խառնուրդ—Ռ. Գ.), որ ամեն տեսակ փոփոխությունների կարող է ենթարկվել իշխանության կամքով (կամ միենույն ժամանակության կամ պետության կամքով), որ ծագում և փոխակերպվում է պատճենականուրեն, և առաջին անգամ գիտական հողի վրա գրեց սոցիոլոգիան՝ սահմանելով հասարակական տնտեսական Փորմացիայի իրեն տվյալ արտադրական հարաբերությունների միասնության հասկացողությունը, հասաւատելով, որ այդպիսի Փորմացիաների զարգացումը բնագամատմական պրոցես է»:

Ները, մահավանդ ինգելսը: Երբ կարդում ես ինգելսի գրածը՝ Դաը-
զինի մասին, աեսնում ես, որ դա նոր ուսմունքի հասարակ
պոպուլարիզացիա, հասարակ մեկնարանություններ չէ, այլ բո-
ղորովին նոր լուսարանություն մարքսիստական նոր մեթոդոլո-
գիայով:

Մարքսը և ինգելսը ճիշտ նշում են, որ էվոլուցիոն ուս-
մունքը իր պատմական զարգացման ընթացքում իդեոլոգիական
պենք էր ծառայում բուրժուազիայի ձեռքում, ֆեոդալական կար-
գերի գեմ ունեցած պայքարում: Անգլիայի արդյունաբերու-
թյան զարգացումը թե քաղաքում և թե գյուղում նպաստավոր
քաղաք էր հանգիսանում էվոլուցիոն ուսմունքի տարածման և
հաղթանակի համար: Վերելքի շրջանում գտնվող բուրժուազիայի
խոշոր իդեոլոգիական զենքերից մեկն էր էվոլուցիոն ուսմունքը:

Նույն բուրժուազիան Դարվինի առաջարկած օրենքներին
ունիվերսալ նշանակություն տվեց: Բուրժուական սոցիոլոգները,
քնագետները բուրժուազիայի շահերից ելնելով՝ գարվինիզմի
ակզրունքներով մոտեցան նաև մարդկային հասարակության
զարգացման օրինաչափությունների լուսաբանության: Եթե
ինգելսը նշեց Դարվինի խոշոր նշանակությունը մարքսիստա-
կան աշխարհայցքի բնապատմական հիմնավորման գործում,
նա հիմք ուներ այդ անելու: Արդյունաբերության զարգացման
հետևանքով առաջ եկած նոր դասակարգը՝ պրոլետարիատը, չէր
կարող չօգտագործել ուսուցիչն բնույթը ունեցող բիոլոգիական
ուսմունքը: Դարվինիզմի ուսուցիչն բնույթը շեշտեցին Մարքսը,
ինգելսը: Այդ է պատճառը, որ ինգելսը լուրջ ուսումնասիրեց
Դարվինին, մարքսիստական մեթոդոլոգիայով վերամշակեց որպէս
ակզրունքները, ապա պարզեց, թե Բնչչակն պիտի օգտագործել
այն՝ որպես իդեոլոգիական զենք բուրժուազիայի գեմ:

Աչ միայն ինգելսի օրոք, այլև հետագայում և այժմ, գա-
ասակարգային պայքարի ուժեղ սրման օրերին, բուրժուազիան
ձեռքից չի ուզում բաց թողնել արդեն վաղուց նրա շահերին
հակասող գարվինիզմը, այն իդեոլոգիան, որ մի ժամանակ նը-
պաստեց նրան ֆեոդալական հասարակարգի դեմ մղած պայ-
քարում: Դրանից ենելով, բուրժուազիան իդեոլոգները հատուկ
վերամշակեան են ենթարկում Դարվինի այն մտքերը, որոնք հա-
կասում են բուրժուազիայի շահերին:

Դարվինի ուսմունքը բուրժուականացնելու բոլոր անհիմն
փորձերի դեմ պայքարի գուրս եկան ոչ թե բնագետ-մասնագետ-
ները, որոնք էմպիրիզմով տարված, խրված զուտ մասնագիտա-

կան հարցերում, չէին ուզում տեսնել առնչություն կյանքի և
տեսության միջև, չէին խորանում տեսական-փիլիսոփայական
հարցերում, կամ էլ կանդնած էին բուրժուական փիլիսոփայու-
թյան հիմքերի վրա: Պրոլետարիատն էնգելսի ժամանակ և հե-
տագայում չունեցավ մի այնպիսի խոշոր մասնագետ-ընդուռու-
թիուզ, որ նշեր, թե ինչո՞ւ նարվինի ուսմունքն ավելի մոտ է
պրոլետարիատի իդեոլոգիային և ոչ բուրժուազիայի:

Այդ արեցին Մարքսը, մանավանդ էնգելսը, որը ինչպես
տացինք, բնագիտության հարցերում դիլլատանս չէր:

Էնգելսի մտքերը գարվինիզմի մասին չեն կորցնում իրենց
թարմությունը և այժմ: Էնգելսի տված լուսաբանությամբ զար-
պինիզմը մեր առաջ պատկերանում է ոչ թե որպես բուրժուա-
զիային սպասարկող մի ուսմունք, այլ հենց նույն բուրժուազիա-
յի շոհերին, ձգումներին հակասող, նրա անխուսափելի անկումն
ավետող ուսմունք:

Էնգելսն ամենին չէր կարծում, թե զարվինիզմը կամ
էվոլուցիոն ուսմունքը մեկ մարդու՝ Դարվինի աշխատանքի ար-
դյունքն էր: Ինչպես ամեն մի թերիա, նմանապես և էվոլու-
ցիոն ուսմունքն ուներ իր պատճական անցյալը, որի արմատ-
ներն սկսվում են գեռ հին դարում, հունական և հռոմեական
փիլիսոփայությունից: Գիտական շատ զաղափարներ սաղմային
դրությամբ, տեսականորեն արտահայտված էին դեռ հում մի-
շաբաթ հնագարյան փիլիսոփա-բնագետների կողմից, մանավանդ-
էվոլուցիայի, զարգացման, նյութի շարժման, փոխակերպման
զաղափարները (օրինակ՝ Արիստոտել, Հիրակլիտ, Էմպեդոկլ): Ա-
նաքսիմանդը և ուրիշներ): Այսպիսով, կը կին այդ մա-
սին հիշեցնում է էնգելսը. «մենք նորից վերադառնում
ենք հունական փիլիսոփայության մեծ հիմնագիրների հայցքին»:
թե համայն ընությունը, փոքրագույնից մինչև մեծագույնը, ա-
վազի հատիկից՝ մինչև արևը, պրոտիստներից մինչև մարդը—
ամեն ինչ գտնվում է մշտնջենական ծագմոն, ու անցման,
հարատե հոսանքի, անդադրում շարժման և փոփոխման մեջ.
միայն այն էական տարբերությամբ, որ այն, ինչ որ հույնների
մոտ հանձարեղ ինտուիցիա էր, մեզ մոտ խիստ գիտական փորձի
վրա հիմնված հետազոտության հետևանքն է, դրա համար էլ շատ
ավելի որոշ ու պարզ ձևով է հանդես գալիս»*:

** Էնգելս, «Բնության դիալեկտիկա, էջ 145:

Բնադիտության պատմության տվյալները ցույց են տալիք
 Ըստելին, թե ինչպես շատ վաղեմի ժամանակներից բնագիտու-
 թյան այս կամ այն ճյուղի դրությունն ու զարգացումը կապ-
 ված էր տվյալ՝ ժամանակի սոցիալ-տնտեսական պայմանների և
 արտադրողական ուժերի զարգացման հետ. օրինակ՝ Աստղաբաշխու-
 թյունը—հենց տարվա եղանակների համար —բացարձակ անհրա-
 ժեշտություն է թե իմանարած և թե երկրագործ ժողովուրդնե-
 րի համար. Աստղաբաշխությունը կարող է զարգանալ միայն
 մաքեմատիկայի օժանդակությամբ: Ավա ուրեմն պետք է դրա-
 նով էլ զբաղվել: Այսուհետեւ երկրագործության որոշ աստիճանի
 վրա և որոշ երկրներում (ջրի բարձրանալը ռառըման նպատա-
 կով եգիպտոսում և մանավանդ քաղաքների ծագման խոշոր
 կառուցումների ու արհեստի զարգացման համընթաց՝ մեխանի-
 կան: Շուտով նույնպես նրա կարիքն զգացվեց ծովագնացուրյան
 ու պատերազմի համար: Նա էլ զգում է մաթեմատիկայի օգնու-
 թյան կարիքը և այդպիսով նրան մղում է զեպի զարգացում: Այսպիսով
 արդեն զիտությունների ծագումն ու զարգացումը
 պայմանավորված է արտադրությամբ*:

Ինչ վերաբերում է բիոլոգիական գիտություններին՝ ին-
 գելսը շատ ճիշտ նկատում է, որ սկզբնական շրջաններում նրանք
 նկարագրական բնույթ ունեին, փաստեր էին հավաքում. կու-
 տակում առանց սիստեմի, նկարագրում, առանց որևէ լուրջ ամ-
 փոփութեան, ընդհանրացումներ անելու, բայց հետզհետեւ մորֆո-
 լոգիական գիտություններին հաջորդում են դինամիկ գիտու-
 թյունները:

«Կենդանաբանությունն ու բուսաբանությունը,—ասում է
 Էնդելսը,—տակավին մնում են հավաքագրող գիտություններ,
 մինչև որ ասպարեզ է գալիս պալեոնտոլոգիան (Կյուվիե): Շու-
 տով դրան հաջորդեց բջջի հայտաբերումը և օրգանական քի-
 միայի զարգացումը: Այդ ճանապարհով միայն հնարավոր զար-
 ձան նույնպես մորֆոլոգիան ու ֆիզիոլոգիան որպես ստույգ
 գիտությունները**»:

Էնդելսը նշում է և այն ուշագրավ հանգամանքը, որ մի
 զարք անվանի գիտնականներ, հակառակ իրենց ցանկության,

* Էնդելս, Բնության դիալեկտիկա, էջ 63:

** Նույն տեղ, էջ 64.

իրենց ուսումնասիրած, կուտակած վաստերի ազդեցությամբ
ակամա գալիս էին հաստատելու էվոլուցիոն ուսմունքը
Մի շարք երկրաբաններ, ինչպես և Փոն-Բուխը, Կիբաշտեյն,
Գառուեր և ուրիշները, ուսումնասիրել էին երկրակեղեռում գտնը-
ված բրածոները, և դրանց նկարագրությունները «լույս էին
սփռում տարբեր օրգանիզմների գենետիկ կապի վրա» (Էն-
գելս): Այդ հետախույզները փաստերի ուժով գրերի «Հակառակ
իրենց կամքի, հակվել են կամարկի ծննդաբանական հիպո-
թեզին» և գեռ Դարվինի գրքից առաջ*:

Երկրաբան Լեոն Փոն-Բուխն իր աշխատություններից մե-
կում, — ինչպես ասում է Էնգելսը, — ապացուցում է այն, որ «հին-
ձեերի չքացումը և նորերի երեան գալը ամենին հետեանք չէ
օրգանական էակների հիմնովին ոչնչացման, այլ նոր տեսակների
տուած գալը հին ձեերից տեղի է՝ ունենում ամենայն հավանա-
կանությամբ, փոփոխված կենսաֆայմանների պատճառով
միայն»**:

Այսուղի էնգելսն ակնարկում է Փոն-Բուխի այն միտքը,
որ հակադրում է Կյուլիկեի կատաստրոֆների թեորիային: Հա-
մաձայն վերջին մետաֆիզիկական թեորիայի՝ օրգանական աշ-
խարհը փոփոխվել է շնորհիվ մի շարք հոկայական երկրաբանա-
կան հեղաշրջումների, երբ երկրի մակերեսի փոփոխման հետ-
զուգընթաց ոչնչացել էին օրգանական ձեերը, ապա ոչնչաց-
րած ձեերից բոլորովին անկախ առաջացել են նոր ձեեր:

Էնգելսի ուշադրությունից չփրիպեց նաև կլասիֆիկացիայի (Լիննեի) նշանակությունն օրգանիզմների ազգակցության և էվո-
լուցիայի հարցում: Լիննեի հակաէվոլուցիոն մեկնաբանություն-
ների մեջ (նա՝ օրգանիզմների առաջ գալն արարչագործության էր-
վերագրում) էնգելսն էլ նկատեց մի հակասություն, որ հայտարե-
րում էր Լիննեի բացարձակ հակաէվոլուցիոնիստ չլինելը: Իսկապես,
Լիննեն մի կողմից ասում էր, թե օրգանիզմներն իրենց ստեղ-
ծագործման օրից մնացել են կայուն, անփոփոխ ձեեր, բայց
մյուս կողմից, ինչպես նշում է էնգելսը, «արդին մեծ բան է ը»

* Էնգելս, «Բնության դիալեկտիկա», էջ 44:

** Նույն տեղ, էջ 44:

երբ Լիննեն ընդունեց, թե այստեղ ու այնտեղ խաչաձև ան միջուցով կարող են նոր տեսակներ առաջանալ»^{*}:

Ծանոթ է հնգելսը և այն գիտնականներին, որոնք Դարվինից առաջ այս կամ այն չափով, որոշ հարցերում էվոլյուցիոն մտածողություն էին ցուցաբերում: Դրանց թվումն էր Կ. Վոլֆը, որ «1759 թ. առաջին հարձակումը գործեց տեսակների մշտըն-ջենականության ուսմունքի գեմ ու հայտարարեց նրանց դարդացման ուսմունքը»^{**}: Ավելի կոնկրետ այդ հարցը շոշափեցին Օկենը, Լամարկը, Բերլը:

Դարվինիզմի հաջողությունները և հաղթանակը Անգլիայում էնգելսը կապում է Անգլիայի տվյալ ժամանակի սոցիալ-տնտեսական պայմանների հետ: Եվ իրոք, Դարվինն իր տեսության ուսումնասիրության, հիմնավորման համար իր հայրենիքում «ավելի լավ ասպարեզ չուներ, քան կենդանաբուծությունը և բույսերի մշակությունը: Այդ նպատակի համար Անգլիան ուղղակի կասիկի երկիր է: Այս տեսակետից մյուս երկրների, ինչպես օրինակ, Գերմանիայի, տված արդյունքները նույնիսկ հեռավոր չափով չեն կարող համեմատվել Անգլիայի հետ, ընդուրում ձեռք բերված հաջողությունների մեծագույն մասը պատկանում է վերջին հարյուրամյակին, այնպես որ փաստերի հավասարություններ չեր հարուցում»^{***}:

Էնգելսը, խոսելով Դարվինի գոյության կովի սկզբունքի մասին, նշում է այդ հարցում Դարվինի մի թերությունը, այն է՝ Մալթուսի ուսմունքը «միամտությամբ, առանց շրջա հայեցողության ընդունելլը»: Բայց ինքն էնգելսը տեսնում էր, որ բոլորվին իզուր են բուրժուական գիտնականները նույնացնում մալթուսյան սկզբունքը Դարվինի ուսմունքին: Նա շեշտում է, որ «ամեն ոք հենց առաջին հայացքից կտեսնի, որ բնավ կարիք չունի (այսինքն՝ Դարվինը—Ռ. Գ.) Մալթուսի ակնոցների օգնությանը դիմելու, որպեսզի նկատի բնության մեջ տեղի ունեցող գոյության կոփվը, նկատի այն հակասությունը, որ գոյություն ունի բնության կողմից շռայլորեն ստեղծված անթիվ քանակամար սաղմերի և այն չնչին քանակությամբ սաղմերի միջև, որոնք ընդհանրապես կարող են հասունանալ. մի հակա-

* Էնգելս, «Բնության դիալեկտիկա», էջ 139:

** Նույն տեղ, էջ 145:

*** Էնգելս, «Անտի-Դյուրինգ», էջ 87,

առություն, որն ըստ մեծի մասին փաստորեն լուծվում է մերթ-ընդմերթ ծայրահեղ գաժանության հասնող գոյության կովի միջցով»*:

Դարվինը գերազնահատել էր գոյության կովը: Ուրեմն Դարվինը, թեկուղ միայն ակնարկից Մալթուսի վրա, բայց արդեն այդպիսով ընկավ այն թերությունների մեջ, «որոնք հատուկ են ազգաբնակչության գերաճման ուսմունքի տերտերական-մալթուսական հայցքներին»**:

Այն հանգամանքը, որ Դարվինն օգտագործել էր Մալթուսի Գորմուան***, առիթ տվեց բուրժուական գիտնականներին նույնացնել մարդկային հասարակության և կենդանական աշխարհի օրինաչափությունները և ասելու, թե Մալթուսի Գորմուան մարդկության նկատմամբ էլ ճիշտ է, քանի որ հիմնավորում է բնությունից վերցրած փաստով, հիմնավորում նրանով, որ նույն Գորմուան Դարվինը կիրառում է կենդանական և բուսական աշխարհներում:

Դարվինն իր գոյության կովի սկզբունքը Մալթուսից չի վերցրել, առանց այդ էլ բնության մեջ դիտված փաստերն արդեն ցուցաբերում էին Դարվինի առաջ տեղի ունեցող գոյության կովից: Դարվինը ամիայն ասում է, որ գոյության կովի իր թեորիան Մալթուսի թեորիայի կիրառումն է կենդանական և բուսական բովանդակ աշխարհի նկատմամբ****:

Բուրժուական գիտնականներն ասում էին, որ իբր Դարվինը համամիտ էր Մալթուսի ուսմունքին, իբր թե գարվինիզմը, իր գոյության կովի սկզբունքով, լուսաբանեց նաև մարդկային հասարակության օրինաչափությունները: Նրանք ճզնում էին հիմնավորել որ Դարվինիզմն ապացուցում է, թե մարդկային հասարակության մեջ էլ տեղի ունի կենդանական ձեր գոյության կոփի. գուրս է գալիս այն, իբր գարվինիզմը ճշտում է Մալթուսի Գորմուան մարդկային հասարակության նկատմամբ, ապա ուրեմն, իսկապես, մարդկության գերաճման հետևանքով առեղի ունեցող գոյության կովում թույլը, անընդունակը (ըստ

* Էնգելս, «Անախ-Դյուրինգ», էջ 87.

** Նույն տեղ, էջ 88:

*** Օրգանիզմները բազմանում են երկրաչափական պրոցեսիայով, մակ սնունդը անում-թվաբանական պրոցեսիայով:

**** Էնգելս, «Անախ-Դյուրինգ», էջ 88:

Մալթուսի՝ չքավորները, բանվորները) պիտի զիջեն ուժեղին, ընդունակին (ըստ Մալթուսի, ունեոք զասակարգին, բուրժուազիացին):

Ենգելսը նշեց, թե Դարվինը ամենեին կարիք չուներ գիմեռու։ Մալթուսին, դրանով նա ընդգծում էր, որ զարվինիզմի և Մալթուսի մեջ կապ չի կարող լինել և չկա: Ճիշտ է, Դարվինը զուր է հիշատակել Մալթուսին, ինչը Դարվինը մեծ նշանակություն չի տալիս Մալթուսին: Այդ երկում է հենց Դարվինի խոսքերից: Նրա հիմնական աշխատության մեջ («Տեսակների ծագումը») արտահայտված մտքերից երկում է, որ եթե նա կիրառել է Մալթուսի փորմուլան կենդանիների և բույսերի նկատմամբ, այդ գեռ չի նշանակում, թե նույն մտքով այն հնարավոր է կիրառել մարդկանց վերաբերմամբ: Մարդկային հասարակության մեջ Մալթուսի փորմուլան հանդիպում է մի հիմնական հակասության, այդ այն է, որ սննդի պակասությունը երբեք չի կարող խոչնդու հանդիսանալ բազմացմանը, քանի որ կան բազմաթիվ արհեստական միջացներ սննդունքն ավելացնելու համար. իսկ այդ հնարավորությունը բացակայում է վայրի բնության մեջ:

Եթե էնգելսը նշեց Դարվինի որոշ մալթուսականությունը, այդ էլ իզուր չեր, քանի որ Դարվինը վերոհիշյալ իր միտքը չզարգացրեց Մալթուսի փորմուլան մարդկանց նկատմամբ բուլորովին բացառելու համար: Դարվինը որոշ չափով համամիտ էր սոցիալ դարվինիստների այն դրույթին, թե մարդկային հասարակությունն էլ զարգանում է համաձայն օրգանական աշխարհում տիրող գոյության կովի օրենքի և այդ գոյության կովում «լավ» ցեղերը (օրինակ՝ սպիտակը) միշտ հաղթող պիտի հանդիսանան: Բներենք մի նմուշ. Դրեալիսմին գրած նամակում Դարվինն ասում է. «Ես կարող էի ամենաեռանդուն կերպով պաշտպանել այն փաստը, որ բնական ընտրությունն արել է և անում է քաղաքակրթության համար ավելի, քան պատկերացնում են բոլորը: Հիշեք, որքան մեծ էր եվրոպական ազգությունների համար բազմաթիվ դարերի ընթացքում տաճիկների կողմից կեղեքերու վտանգը և որքան ծիծաղելի է նման զաղափարն այժմ: Այսպես կոչված քաղաքակրթությունը ուստաները զոյության կովում հաղթահարեցին տաճիկներին: Եթե դուք նայեք քիչ թե շատ մոտ ապագան, կտեսնեք ինչքան բազմաթիվ ստորին ուսաներ ոչնչացվելու են երկրի վրա ավելի բարձր քաղաքակրթուաների կողմից»:

Այս տողերից շատ պարզ է, որ էնգելսի նշումը, թե Դարվինը որոշ չափով մալթուսական է, լուրջ հիմք ունի:

Ոչ մի բնագետ կանգ չառագ Դարվինի այդ սխալ մոտեց-

ման վրա! Այդ գարմանալի էլ չէր, քանի որ բնագիտությունն
ազգված էր բուրժուական իդեոլոգիայից:

Էնգելսը սուր է արտահայտվում: Նա նշում է, թե ինչպիսիք
զաղբելի եղբակացություններ են անում մալթուսականները՝
հիմնվելով գարվինիզմի որոշ թերությունների վրա, այսինքն՝
այն մտքերի վրա, որոնք սոցիալական բնույթուններն Այդ անընդ-
նական, անպետք նստվածքը պետք է մաքրել դարվինիզմից,
վերջինիս տալ ավելի գիտական և բնական լուսաբանություն:

Էնգելսը խորին վրդովմունքով է խոսում Մալթուսի փորմու-
լայից մալթուսականների արած եղբակացությունների մասին՝
մարդկության վիճակի «բարելավման» նրանց առաջարկուա-
թյունների առթիվ: Էնգելսը դրում է. «Մարկը (մալթուսա-
կաններից մեկը—Ռ. Գ.) ասում է, «Ամեն մի բանվարի ընտառ
նիքին պետք է հասնի երկու ու կես երեխա. դրանից ավելին՝
պետք է անցավագին մեռցվի: Ողորմությունը հանցանք է, ու-
րովհետեւ այն ուժեղացնում է բնակչության գերածումը. բայց
շատ օգտակար է չքավորությունը վերածել հանցանքի և բան-
վորական տները—ուղղիչ հիմնարկների, ինչպես այդ արված է
Անդիայում չքավորների վերաբերյալ նոր «ազատամիտ» օրենս-
քով»*:

Էնգելսի ասելով՝ Ալիսոնն իր տվյալներով բացասեց Մալ-
թուսի սկզբունքը՝ նշելով, որ չչափահաս մարդն ավելի է ար-
տադրում, քան ինքն սպառում է**: Մալթուսն անտեսել է այն
հանգամանքը, որ ավելի շատ բնակչություն նկատվում է այն-
տեղ, ուր անունդը, կապիտալը, հողային սեփականությունն էլ
շատ է: Մի խոսքով որչափ մեծ են ընդհանրապես արագարողա-
կան ուժերը, այնչափ շատ է և բնակչությունը: Մալթուսը շփո-
թում է գոյության միջոցներն աշխատանքի պահպանման մի-
ջոցների հետ: «Աշխատանքի պահպանման միջոցները,—ասում
է Էնգելսը,—իրենց վախճանական արդյունքում միայն մեծա-
նում են մեքենաների և կապիտալի ուժի մեծանալու: Հետ միասին,
իսկ գոյության միջոցները բարձրանում են անմիջապես, հենց
որ առհասարակ որոշ չափով արտադրական ուժերն են աճում»***:

Էնգելսն ընդգծում է, որ Դարվինն էլ որոշ նշանակություն
տվել է Մալթուսի ուսմունքին. բայց կենդանական և բուսական

* Маркс и Энгельс, — „Сочинения“, изд. 1931 г. т. II, стр. 313.

** Նույն տեղ, էջ 314

*** Նույն տեղ

աշխարհների նկատմամբ, Մալթուսի փորմուլի իրական լինելը մասամբ նա տեսնում է և մարդկային հասարակության մեջ՝ Դարվինն ասում է, թե՝ «այդ (այսինքն՝ իր ուսմունքը—Ռ. Գ.) Մալթուսի ուսմունքն է ավելի մեծ չափով (ընդգծումը մերն է—Ռ. Գ.) կիրառված բուսական և կենդանական աշխարհների նկատմամբ և կիրառված ամենալուրջ մտքով, որովհետև այս գեղքում չի կարող ազդել թե սննդի արհեստական աճումը և թե ամուսնությունից զգույշ ձեռնպահ լինելը»*: Այս տողերից երեսում է որ Դարվինը կարծես մի կողմից համաձայն չէ Մալթուսի օրենքի կիրառմանը մարդկանց նկատմամբ, որովհետև մարդիկը հնարավորություն ունեն «սնունդն արհեստականորեն աճեցնելամուսնությունից զգույշ ձեռնպահ լինել», բայց մյուս կողմից էլ նկատվում է որոշ տրամադրություն դեպի մալթուսյան տեսակերպ: Եթե կենդանական և բուսական աշխարհներում կիրառվում է «մեծ չափով», ապա դուրս է գալիս, որ այն կիրառելի է «փոքր չափով» և մարդկանց վերաբերմամբ:

Էնգլիան ավելի որոշակի զարգացրեց և պարզ մեկնարանեց Դարվինի անհամարձակ հայտնած այն միտքը, թե մարդկային հասարակության մեջ անշուշտ գերաձաման դեմ կան մի շարք արհեստական միջոցներ: Նա մեծ նշանակություն է տալիս մասնավանդ դիտության նվաճումներին, առանձնապես շեշտում է զյուղատնտեսության համար նշանակություն ունեցող քիմիական նվաճումները, անվանի քիմիկոսների աշխատությունները (ինչպես՝ Գեմֆրիի, Դեվիի, Յուստուս Լիբիի և ուրիշների): Ճիշտ է, աճում է և բնակչությունը, բայց նույն տրագությամբ աճում են և գիտության նվաճումները: «Ամենասովորական պայմաններում այն (դիտությունը—Ռ. Գ.) նույնպես երկրաշափական պրոցեսիայով է աճում: Իսկ բնչ կա գիտության համար անհնարինա»: Ծիծաղելի է խոսել գերբնակչության մասին, քանի որ «Միսիսիպիի հովիտալ բավականաչափ ազատ հողեր ունի Եվրոպայի ամբողջ բնակչությունը տեղափորելու համար, քանի որ ընդհանրապես երկրի միայն երրորդ մասը կարելի է մշակման մեջ համարել և արտադրողականությունը վեց և ավելի անգամ կարելի է բարձրացնել արդեն այժմ մեղքանոթ ոռոգման միջոցով»**:

* Дарвин, „Происхождение видов“, изд. Лепковского, стр. 107.

** Маркс и Энгельс,—„Сочинения“, т. II, стр. 316.

Դարվինը մեծ նշանակություն տվեց օրդանիզմների գերաբնակչությանը՝ համարելով այդ գոյության կովի ֆակտոր, մինչ զեռ օրդանական ձևերը կարող են փոփոխվել, անհետանալ և նրանց փոխարենը նորերը և ավելի հարմարվածները զարգանալ՝ «առանց այդպիսի գերբնակչության, օրինակ, երբ կենդանիներն ու բույսերը նոր վայրեր են փոխադրվում, որտեղ նոր կեմայտկան, հողային և այլ պայմանները նպաստում են փոփոխմանը»*: Օրդանական որոշ ձևեր կարող են փոփոխվել, ավելի կատարելագործվել, իսկ ուրիշ ձևեր—մեռնել. ոչնչանալ առանց «մալթուսականության. իսկ եթե այդ գեղը ուղղվում վերջինս էլ դեր խաղա, ապա նա պրոցեսի մեջ ոչինչ չի փոխում, լավագույն դեպքում արագացնում է այն»**:

Էստ էնգելսի Դարվինն իր «բնական ընտրության» սկզբանքում խառնում է երկու իրար հակառիր բան:

«1. Ընտրություն՝ գերբնակչության ճնշման շնորհիվ, երբ ուժեղները թերեւ առաջին հերթին են, գերապրում սակայն թույլերն էլ որոշ պայմաններում կարող են գերապրել:

2. Ընտրություն՝ փոփոխած պայմաններին ավելի հարմարվելու մեծ ընդունակության շնորհիվ, երբ գերապրոզներն այս պայմաններին ավելի են հարմար. այս գեղը ուղղվում, սակայն, հարմարվելն առնատարակ՝ կարող է առաջադիմություն էլ լինել հետագիմություն՝ էլ (օրինակ՝ պարագիաային կյանքին հարմարվելը միշտ հետագիմություն է)***:

Ընդունելով Դարվինի «զարգացման թեորիան», էնգելսը միաժամանակ նշում է և այդ ուսմունքի հիմնական բացերից մեկը. Այդ այն է, որ պարզված, լուսաբանված չեն օրդանիզմների փոփոխականության, անհատական շեղումների պատճառակը. Անրավարար է համարում և այն, որ ամեն ինչ վերագրում է գոյության կովին, մինչդեռ «բնության, —ինչպիս մեռյալ, նույնպես և կենդանի, —մարմինների փոխադարձ պղկեցությունը, իր մեջ է առնում և ներդաշնակությունն, և ըախում, և պայքար, և համագործակցությունն Դրա համար էլ եթե այսպիս կոչված բնագետը թույլ է տալիս իրեն պատմական զարգացման ամբողջ բազմազան հարստությունն ամփոփել միակողմանի և չոր «գոյության կովի» փորմուլայի մեջ, մի փոր-

* Էնգելս, «Բնության գիտեկաթիւ».

** Նույն տեղ, էջ 192—193:

մուլա, որը նույնիսկ բնության բնագավառում կարող է միայն շատ օրանություններ ապա այսպիսի վերաբերմունքը հենց ինքն իրեն զատապարտում է»*:

Դարվինը բոլորովին չի անտեսել օրգանիզմների փոխադարձ օգնությունը, թեև ամեն տեղ տեսնում է զոյության կոփիր բայց միևնույն ժամանակ, օրինակ, նա ասում է, «Կյանքի այն ծայրագույն սահմաններում՝ բնեուային երկրներում, կամ անապատի ծայրամասերում զտղարում է ամեն մի մրցում»**: Քիչ հետո նույն տեղում, «Պատերազմը, որ վարում է բնությունը ունի ընդհատումներ»: Իսկ որ Դարվինը գերազանացած է զոյության կովի նշանակությունը, — ինչպես նշեց Էնդելսը, — այդ արդեն ճիշտ է:

Էնդելսի վերլուծման ենթարկած բիոլոգիական հարցերից էր էվոլուցիոն ուսմունքի հիմնական, շատ կարևոր հանդուցային պրոբլեմը՝ մարդու ծագումը՝ ավելի ճիշտ՝ կապկանման նախահոր մարդացման ֆակտորները, մարդկային և կենդանական աշխարհների օրինաչափությունների հարցը:

Դարվինը վերջնականապես ապացուցեց և գիտության մեջ անժիստելի և ընդունելի դարձեց մարդու կենդանական ծագման փաստը, բայց նա չխոսեց մարդացման պրոցեսի պատճառների մասին: Այդ հարցը նա չլուծեց: Ճիշտ է, այդ առթիվ որոշ մտքեր Դարվինը հայտնեց, բայց նրանք էական նշանակություն չունեցան, քանի որ զուտ բիոլոգիական ֆակտորներով էր մեկնաբանում:

Իսկ էնդելսը, ընդունելով մարդու կենդանական ծագումը՝ կանգ առավ այն հարցի վրա, թե ինչպես նախնական կապկանը՝ ման ձեերից զարդացավ մարդը, ինչ ֆակտորների ներգործությամբ կատարվեց այդ պրոցեսը:

Դարվինի կարծիքն այդ հարցում այն էր, որ այդ պրոցեսումն էլ տեղի ունեին օրգանական աշխարհի ունիվերսալ օրինաչափությունները՝ զոյության կռիվը, բնական ընտրությունը՝ Ապա ուրեմն, ըստ Դարվինի, մարդկային հասարակությունները, ցեղերը զոյության կովի մեջ լինելով՝ շարունակ փոփոխվել են,

* Էնդելս «Բնության դիտելելու կամաց Պ. Լավրովին» 347—348:

**Дарвин, „Происхожд.“, стр. 117.

ումանք դեպի առաջ զարգացել, ոմանք դեպի ետ, նույնիսկ անհետացել: Մարդկային հասարակական ձևերի, կենցաղի, մտածողության զարգացումը, փոփոխությունները հետեւանք են համարվում զոյության կովի:

Դարվինը գերագնահատեց գոյության կովի օրենքը, նրանով փորձեց բացարել մարդկային հասարակության զարգացումը՝ նրան վերագրելով տարբեր ռասաների, ազգությունների հետամնացությունը, կուտուրականությունը, «քաղաքակիրթ» ազգությունների գերիշխումը, «վայրենիս կոչված ցեղերի այլամերումը, ոչնչացումը: Այս տեսակետը բուրժուական իդեոլոգիայի աղղեցության հետեւանք էր: Այս տեսակետից ելնելով՝ բուրժուազիան արդարացնում է իր դասակարգային, իմապերիագիտական նվաճողական քաղաքականությունը: Այսպես կոչված սոցիալ-դարվինիստներն օգտագործեցին Դարվինի թերի, սխալ այն ակնարկը, թե մարդկային հասարակության մեջ էլ նույն գոյության կոիվն է իշխում, որը հատուկ է կենդանական աշխարհին: Այդ միտքն ավելի ևս զարգացնելով՝ դասակարգային պայքարը լրիվ նույնացըին գոյության կովին: Նրանք մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունները պուստանեցին Դարվինի ուսմունքի տեսակետից: Ահա այդ սկզբանքային հարցի վրա առանձնահատուկ ուշադրություն դարձեց էնգելսը, լրացրեց և շտկեց Դարվինի սխալ թերի, չլուսաբանված մտքերը և բոլորովին նոր տեսակետով վերլուծեց հարցը: Էնգելսը գրեց մի հետաքրքիր, բայց չափարտված աշխատություն՝ «Աշխատանքի գերը կապկի մարդացման պրոցեսի մեջ»: Էնգելսը պարզ և որոշակի, բոլորովին նոր լուսաբանությամբ, տալիս է նույն հարցի լուծումը, որի առաջ կանգ էր առել Դարվինը: Կապկի մարդացման պրոցեսի վերլուծումն անշուշտ պետք է արվի էնգելսի գծած ուղիով:

Մարդու ծագման, մարդացման պրոցեսի հարցն այն լուրջ, հանգուցային հարցն է, որի շուրջը խաչաձևվում են մի շարք ակզրունքային հարցեր, որոնք չափազանց ակտուալ են, հարցեր, որոնք ունեն նշանակություն հակակրոնական պայքարում, հարգվածում են իդեալիստական և մեխանիստական մեկնարանությունները:

Մարդացման պրոցեսում, ըստ էնգելսի, վճռական դեր են կատարել գործիքն ու աշխատանքը: Այն մոմենտից, երբ

Հասպիկանման նախնական ձեն սկսեց զործիք զործածել և մահավանդ գործիք մշակել, հարմարեցնել իր կենսական կարիք ներին,—ահա այդ իսկ մոմենտից օրգանական աշխարհի էվոլուցիայում կատարվեց թռիչքային մի փոփոխություն, այն է՝ մարդու առաջացումը, մարդացումը, —որակային նոր պրոցես:

Էնդելսն էլ գիտեր, որ միայն գործիք գործածելը բավական չէ և այդ չէ բնորոշը, քանի որ կան այնպիսի լենդանիներ, որոնք երբեմ դիմում են զործիքի օգնության, օրինակ՝ փիղը ճյուղով քշում է մարմինից միջատներին, կապիկները քարերով պաշտպանվում են, քարով, ճյուղով պտուղ թափում ծառերից։ Ամենակարեւը գործիք մշակելը, պատրաստելն է։ «Հենց այստեղ է երևան գալիս, —ասում է էնդելսը, —թե որքան մեծ է տարբերությունը մարդանման կապիկի անզարդացած ձեռքի ու մարդու հարյուր հաղարավոր տարիների ընթացքում աշխատանքի միջոցով բարձր կատարելության հասած ձեռքի միջև։»

...«Ոչ մի կապիկի ձեռք երբեք չի պատրաստել թեկուզ ամենակոպիտ քարե գանակը»**:

Ի հարկե, քարե զենքի մշակման անցնելու պրոցեսը երկար ժամանակվա ընթացքում է կատարվել։ Մարդու ձեռքն ապատվելով՝ արդեն նոր հատկություններ է ձեռք բերում և նոր գործողություններ կատարելու ընդունակ դառնում։ Փոփոխված հատկությունները, ձեռք բերած ճկունությունը, ձեռքի բազմազան աշխատանքները կատարելու հարմարվելն անցնում է ժողովարար, սերնդից սերունդ։

«Այսպիսով, —ասում է էնդելսը, —ձեռքը սոսկ աշխատանքի օրգան չէ, այլ նաև նրա արյունիքը ինարկե, ձեռքի աշխատանքը, զրա հետեւանքով մկանների և ոսկորների հատուկ զարդացումը և այդ բոլորի սերնդե սերունդ ժառանգաբար փոխանցվելը և ավելի ու ավելի կատարելագործվելը մարդու ձեռքը կատարելության այն աստիճանին հասցըեց, որ կարող էր հրաշագործել Ռաֆայելի նկարները, Թորվալդսնի արձանները, Պատգանինու հրածշտությունը»***:

Համաձայն կորելացիայի օրենքի՝ ձեռքի աստիճանական կատարելագործման և ոտքի ուղղահայաց զարգացման հետ

* Էնդելս, «Աշխատանքի գերը կապիկի մարդացման մեջ», էջ 6:

** Նույն տեղ։

*** Նույն տեղ, էջ 7։

զուղընթաց առաջացել են փոփոխություններ և մարմնի այլ մասներում:

Նախնական մարդանման կապկից առաջացած առաջին մարդկային ցեղը հետզհետեւ «ձեռքի դարդացմամբ, աշխատանքով սկսվող տիրապետությունը ընության վրա յուրաքանչյուր քայլափոխում ընդարձակեց մարդու հայեցաղաշը ...ընության իրերի մեջ նա շարունակաբար հայտնաբերեց նոր, մինչ այդ անձանոթ հատկություններ»*:

Ինչպես տեսնում ենք, էնդելսը զուտ բիոլոգիական տեսակետից չի մոտենում մարդացման պրոցեսին: Գործիքի գործածությունը և այն մշակելն օրգանական էվոլուցիայի բարձրագույն աստիճանում իրրե նոր որակային գործոն է հրապարակ գալիս, ոչ բիոլոգիական գործոն, որը վճռական դեր կատարեց մարդանման կապկի մարդացման և նախնական մարդու հետուգա զարգացուան պրոցեսում: Ոչ միայն գործիքի գործածելը, այլև այն մշակելու հետ կապված աշխատանքի դերն է, որ էնդելսը շեշտեց, և աշխատանքը հասկացվում է լայն մտքով, որպես սոցիալական օրինաչափություն:

«Մյուս կողմից, — ասում է էնդելսը, — աշխատանքի զարգացումն անհրաժեշտաբար նպաստեց հասարակության անդամներին ավելի սելտորեն՝ կատվել իրար հետ, որով հաճախակի դարձան փոխադարձ աջակցության, համագործակցության դեպքերը, և այս համագործակցության օգտակարության զիտակցությունը յուրաքանչյուրի համար պարզ դարձավ: Կարճ ասած՝ զարգացման ենթակա մարդկեր հաստան այն կետին, որ կարիք զգացին մի բան ասելու իրար»**:

Էնդելսն իր լուսաբանությամբ առաջադրեց պատմական մուեցման անհրաժեշտառությունն օրգանական էվոլուցիայի նկատմամբ, պարզեց այդ պրոցեսի պատմական օրինաչափությունները, փոխանցումը մեկ օրինաչափության մյուսի, մանավանդ կոնկրետ օրինակով՝ մարդու զարգացման պրոցեսի օրինակով՝ նշեց բիոլոգիական օրինաչափությունների փոխանցումը սոցիալական օրինաչափությունների:

Պետք է շեշտել, որ այս հարցում էնդելսն իր արտահայ-

* Էնդելս, «Աշխատանքի դերը կապկի մարդացման մեջ», էջ 8.

** Նույն տեղ:

տած մտքերով իր ժամանակի բնագիտության տվյալներից շատ առաջ էր անցել: Դարվինը և բնագետները պատկերացնում էին մարդու ծագման, մարդու առաջացման պրոցեսները որպես մի բնապատմական, զուտ բիոլոգիական պրոցես:

Էնգելսը պարզեց այդ մոտեցման սխալը և շեշտեց սոցիալական օրինաչափությունների վճռական դերը մարդու զարգացման պրոցեսում:

Բոլորպին իզուր են որոշ բնագետների փորձերն էնգելսին դուրս բերելու որպես Լամարկի զաղափարներին հետևող: Դրանց ասելով դուրս է գալիս, որ էնգելսը նոր բան չասաց, այլ կը կնեց Լամարկին և նրա սկզբունքներով լուսաբանեց մարդացման պրոցեսը: Այդպես են դուրս բերում էնգելսին մեխանիստականացմարկիստները՝ վերագրելով նրան լամարկիստական թեքում՝ այսինքն՝ մեխանիստական մոտեցում:

Եթե էնգելսը խոսում էր աշխատանքի դերի մասին, եթե նա շեշտում էր ձեռք բերած հատկանիշների ժառանգականությունը, այդ դեռ չի նշանակում, թե նա աշխատանքը հասկանում էր՝ որպես զուտ ֆիզիոլոգիական դորձոն: Նա ամեներն լամարկիստների նման վուլգար ձեռվ չէր պատկերացնում փոփոխությունները: Ըստ Լամարկի՝ օրգանիզմների փոփոխականությունն առաջ է գալիս միջավայրի անմիջական ազդեցությամբ և ֆիզիոլոգիական գործողության մեխանիկական հասարակ վարժությամբ: Այդ ձեռվ առաջ եկած բոլոր փոփոխական հատկանիշներն էլ ժառանգաբար փոխանցվել են և այդ ձեռվ էլ մարդն առաջացել է կապկից:

Այդպես չէ մոտենում հարցին էնգելսը: Նրա աշխատություններից պարզ երևում է, որ նա ամեներն կոնկրետ չի դրել ժառանգականության, ձեռք բերած հատկանիշների ժառանգաւրար փոխանցման հարցը: Ասել՝ թե նա Լամարկի նման մեխանիստների պես է դրել այդ հարցը, երբեք չի կարելի: Աշխատանքը դերն էլ էնգելսն ամեներն Լամարկի պես չի հասկանում: Հասարակ ֆիզիոլոգիական վարժությունը չէ, որ նպաստել է կապկի մարդացման պրոցեսին և վարժեցման հետևանքով առաջ եկած մեխանիկական փոփոխությունները չեն, որ անմիջական փոխանցվելով հետագա սերնդին՝ իբր թե կապկին մարդ են դարձրել:

Ուրեմն, էնգելսը չի խոսում ժառանգական փոխանցման

ձեր, ժառանգականության մեխանիզմի մասին: Նա նշել է ժառանգականության նշանակությունը, շեշտել հատկանիշների փոխանցումը, այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ առանց բնության այդ օրենքի և ոչ մի էվոլյուցիա, փոփոխականություն չէր լինի: Իսկ թե ինչ ձեռք էր նա պատկերացնում ձեռք բերած հատկանիշների փոխանցումը, այդ հարցի վրա ինպելաը չի ծանրանում:

Ենդելսն աշխատանքը չի հասկանում որպես զուտ բիոլոգիական պրոցես: Գործիք գործածելու, այն մշակելու պրոցեսում մարդկանց մեջ նոր ֆակտորներ են առաջ գալիս՝ սոցիալական ֆակտորներ, մարդկային փոխարարերություններ, Մարդու օգտագործելով գործիքը, ազգելով բնության վրա, ենթարկելով նրա արտադրողական ուժերն իր կարիքներին, փոխելով, կատարելագործելով այդ ուժերը՝ միաժամանակ փոխում էր իրեն:

Ուրեմն ոչ ժառանգականությունը և ոչ էլ փոփոխականության պրոցեսն ինդելսը չի պատկերացնում այնպես, ինչպես լամարկը: Մեխանիստները մարդկանց և կենդանիների մեջ լոկ քանակական տարրերություններ են տեսնում, չեն ընդունում մարդկային հասարակության յուրահատկությունները:

Իսկ ենդելսը կտրուկ կիրառվ գրեց ոչ միայն քանակական այլև որակական փոփոխությունների հարցը: Մարդու և կենդանական աշխարհի զարդացման օրինաչափությունները որակապես տարրեր են: «Բոլոր կենդանիների պլանային գործողությունները, —ասում է ենդելսը, —անկարող եղան իրենց կամքի գրոշմը դնելու բնության վրա: Միայն մարդը կարողացավ այդ անել»*:

...«Կենդանին օգտագործում է արտաքին բնությունը և նրա մեջ փոփոխություն առաջ բերում պարզապես միայն իր ներկայությամբ. մինչդեռ մարդը, իր փոփոխությունների շնորհիվ, նրան գարձնում է սպասարկու իր նպատակներին, տիրապետում նրան: Եվ այն հանդիսանում է մարդու վերջին, էական տարրերությունը մնացած կենդանիներից և գարճյալ աշխատանքն է, որ այդ տարրերությունն առաջ է բերում»**:

Միայն ենդելսը լուսաբանեց մարդկային գարգացման պրոցեսի գիալիկոտիկական բնույթը: Նա նշեց բիոլոգիական օրինաչափությունների որակային փոխանցումը սոցիալական օրինաչա-

* Ենդելս, «Աշխատանքի դերը կապվի մարդացման մեջ», էջ 16:

** Նույն տեղ:

Փությունների: Ենգելսի մտքերի աղճատում պիտի համարել հետեւյալ երկու հակադիր մեկնաբանությունները: Մի կողմից աշխատում են ենգելսին վերագրել այն, թե նա կամարկի տեսակետով է մոտեցել: Հարցի լուծման, այսինքն՝ նկատի է առել բիոլոգիական փակտորը. մյուս կողմից ասում են, թե ենգելսը բոլորովին ժխտելով բիոլոգիականը՝ ամեն ինչ իրը վերագրել է սոցիականին: Այլ կերպ ասած՝ վերջին տեսակետով դուրս է գալիս, որ ենգելսը կապկի մարդացման պրոցեսի հարցում ամեն ինչ վերագրել է սոցիալականին, անտեսված է բիոլոգիականը և իրը նրա մաքերը բիոլոգիական պրոլետերի մասին արժեք չունեն, քանի որ այդ հարցում ենգելսը կրկնել է կամարկին և առել այն, ինչ որ հայտնի էր նրա ժամանակակից բնագիտությանը: Այդպես չպետք է մոտենալ ենգելսին:

Ենգելսն իր տեղում նշում է բիոլոգիական փակտորների նշանակությունը, սակայն նրանց ունիվերսալ չի դարձնում: Նա նշում է բիոլոգիական փակտորների բնագավառը:

Ենդանական աշխարհը և մարդկային հասարակությունը այսինքն՝ նրանցից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ օրինաչափությունները: Մարդը թե՛կ առաջացել է կենդանուց, բայց միաժամանակ նոր որակներ ունեցող ձև է:

«Ենդանական, — ասում է ենգելսը, — լավագույն դեպքում, հավաքում է իր գոյության միջոցները, մինչդեռ մարդն արտադրում է, նա՝ բառիս ամենալայն մաքով ձեռք է բերում այդ գենսամիջոցները, որ բնությունն առանց նրան չէր արտադրի: Այդպիսով անհնար է դառնում կենդանական հասարակության զյանքի օրենքներն առանց այլնայլության փոխադրել մարդկային հասարակության մեջ»*:

Չի կարելի գոյության կոիվը նույնացնել գասակարգային կըռպին: Ապա ուրեմն կապիտալիստական հասարակարգի հակասությունները չի կարելի դարվինիզմով բացատրել: Ենգելսն ասում է, «Վերջապես արտադրության կապիտալիստական հղանակի օրով արտադրությունը հասնում է այնպիսի բարձրության, որ հասարակությունն ի վիճակի չէ սպառելու արտադրած կենսական, վայելքի ու զարգացման միջոցները, որովհետև արտադրողների ճնշող մեծամասնության հանդեպ արհեստականորեն ու

* Ենգելս, Բնության դիալեկտիկա, էջ 58:

բոնի կերպով փակված են դեպի այդ միջոցները տանող ճանապարհները»*:

Թե կապկանման օրդանիգմի մարդացման պրոցեսը, թե մարդկային հասարակության զարգացման պրոցեսն ունեն յուրահատուկ օրինաչափություններ:

Մարդկային հասարակության մեջ,—ինչպես ասում է Էնդելսը,—«այսպես կոչված զոյսության կոփին այնպիսի ձև է ընդունում, որ անհրաժեշտ է դառնում բուրժուական, կապիտալիստական հասարակության արտադրած արդյունքները և արտադրողական ուժերը պաշտպանել նույն այդ կապիտալիստական հասարակարգի կործանարար քայլքայիչ ազգեցությունից նրանով, որ պետք է խլել կապիտալիստական արտադրության և բաշխման ղեկավարությունը դրան անընդունակ դարձած տիրապետող կապիտալիստական գասակարգից ու տալ արտադրող մասսայի ձեռքը. և հենց այս է սոցիալիստական ուղղուցինած**:

Մենք արդեն տեսանք, թե որքան նոր էին Էնդելսի մըտքերը բնագիտության բնագավառում իր ժամանակ և որքան նրանք այժմեական են և մեր ժամանակ: Բիոլոգիական մի շարք հանգուցային, սկզբունքային պրոբլեմներում անշուշտ էնդելսի մտքերը նորություն են:

Մարքսիստական մեթոդոլոգիայի կիրառմամբ միայն հնարքավոր է անհիմն դուրս բերել բուրժուական բնագետների ձրգառումները՝ նույնացնելու բիոլոգիական և սոցիալական օրինաչափությունները:

Էնդելսի՝ կապկի մարդացման պրոցեսի վերլուծությունը՝ նրա՝ մարդկային հասարակության նշան յուրահատկություններն անհիմն են դարձնում բուրժուական գիտնականների ուսամայական թեորիան, մարդկային գլավ» և «վատ» ցեղի պրոբլեմը, անհիմն է դարձնում բուրժուազիայի ձգտումները՝ «գիտականորեն» հիմնավորելու կապիտալիստական հասարակարգի անսասանությունը, կայունությունը, արդարացնելու մարդկանց գասակարգային շահագործումը, «վայրենի» կոչված ազգությունների ոչնչացումը, իմպերիալիստական գաղութային քաղաքականությունը, գաղութային ազգությունների ազատագրական շարժումների ճնշումները:

* Էնդելս, «Բնության դիալեկտիկա», էջ 59:


** Նույն տեղ, էջ 5:

Էնգելսի մտքերը բիոլոգիայի հիմնական պրոբլեմների վեաբերյալ ամեն մի բնագետի տալիս է ղեկավար ուղղություն մարդուստական մեթոդոգիայով լուսարաննելու բիոլոգիայի հարցերը, վերլուծելու այն հակասությունները, որոնք նկատելի են բուրժուական բնագիտության, բիոլոգիայի բնագավառում:

Մեխանիստ բնագետների մեթոդոլոգիան բուրժուազիան օգտագործում է իր շահերի տեսակետից մեկնաբաննելու սոցիալական պրոբլեմները:

Մարքսիզմը՝ հանձին էնգելսի՝ կտրուկ և հիմնավորված առաջադրեց բիոլոգիական պրոբլեմների լուսարանությունը նոր մեթոդոլոգիայով, գիտեկտիկական-մատերիալիստական տեսանկյունով։ Այդպիսով անհիմն են դառնում բուրժուական գիտնականների ճիգերը սոցիալական պրոբլեմները բիոլոգիայի տըզյալների հիման վրա լուսաբանելու, անհիմն են դառնում բուրժուական բնագիտական, բիոլոգիական այն տեսությունները, որոնք այս կամ այն կերպ աշխատում են ամբողջներ կապիտալիստական հասարակարգի հիմքը։





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0029408

A II
1687